

Խաղ - Ազատ Դուբեց


Սահմանադրություն
Տարդը և հայկական
առաջնորդներ

Բագրիկ

1932

Ա. Հ.

229



Ա. 4
229

2012

ամօ.

800

Ա. 8

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏ ԵՎ Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Եւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ



Դաստիարակության գլուխական գործադրությունների 3-րդ բաժանմունքի
համար

ՊԱՏԿԵՐԱՁԱՐՔ

ԹԱԻՐԻՁԵԱՆ Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՅՐԻ ՇՈՒՇ. ԽԱՆ-ԱԶԱՏԻ



ԱԻՍ ՑԱՎԱՆՆԻՄԱՆ
1960
ՆՈՐ - ԶՈՒՅԱ

ՕԲ

بـالـاحـازـهـ زـاـمـهـ اـدـارـهـ مـعـارـفـ آـذـرـيـاجـانـ

در تحت نمره ۳۶ طبع شد

(۱۹۶۰)

Խ229

229-2012
(101408-Ա2)

(3877-2006)
(1986-2006)



Ն Շ Ա Բ Ա Կ Ն

Ինչպէս որ մենք հետաքրքրուում ենք իմանալու,
թէ ովքեր են եղել մեր ծնողներն ու պապերը, այն-
պէս էլ մենք պիտի հետաքրքրւենք, թէ ինչպիսի
մարդիկ են եղել արդեօք մեր նախապապերը, որոնք
ապրել են մեզնից տասնեակ հազարաւոր տարիներ
առաջ: Խիստ հետաքրքիր է իմանալ, թէ որտեղ և
ինչպէս են ապրել նրանք, ինչպիսի կեանք վարել,
ինչ սովորութիւններ ունեցել և այլն:

Մենք գիտենք օրինակ, որ մեր պապերը, որոնք
մեզնից 20—50—100 տարի առաջ են ապրել, բոլո-
րովին հասկացողութիւն ու գաղափար չեն ունեցել
շատ այնպիսի բաների մասին, որոնք մեզ համար
արդէն սովորական բան են համարւում: Այսպէս օրի-
նակ, նրանք ոչ մի հասկացողութիւն չունեին և չէին
էլ կարող ունենալ աւտօմօբիլի, գրամօֆօնի, հեռա-
խոսի, երկաթուղու, հեռագրի և շատ այդ կարգի բա-
ների մասին, որ վերջին ժամանակներում են միայն
մարդիկ հնարել: Եւ մենք այն ասաիման ընտելա-
ցած ենք այդ բալորին, որ մեզ թւում է, թէ դրանք
եղել են մշտապէս և թէ հազիւ մարդիկ պիտի կա-
րողանային եօլա գնալ դիցուք՝ առանց հեռագրի ու
երկաթուղու:

Սակայն, շատ ու շատ հին ժամանակներում,
մարդիկ միանգամայն դուրկ են եղել, ոչ միայն հե-
ռագրից, երկաթուղուց և միւս նորագիւաւ բաներից,

այլ և այն բոլորից, ինչ որ այսօր մեր կեանքի ամենաանհրաժեշտ պայմաններն են կազմում: Տուն, հագուստ, կահ-կարասիք, գիր, թանաք, գործիքներ, զէնքեր, ամանեղին և այն բոլորը, ինչ միանգամայն անհրաժեշտ են այսօր մարդկանց ապրուստի համար, մի ժամանակ բոլորովին գոյութիւն չեն ունեցել: Մարդիկ են իրանց խելքի զօրութեամբ ու աշխատանքով հնարել այդ ամէնը:

Եւ մարդիկ այդ ամէնը հնարել ու կատարելագործել են, ոչ թէ մի անգամից, այլ տակաւ առ տակաւ, հազարաւոր ու տամնեակ հազարաւոր տարիների ընթացքում: Ամբողջ սերունդներ իրանց կեանքի ընթացքում չարչարւել ու տանջւել են, որպէսզի կարողանան կեանքի այս կամ այն յարմարութիւնը ստեղծել: Բայց և ոչ մի սերունդ, ոչ մի ազգ, մինչև իսկ ոչ մի անհատ չէ ստեղծագործել միմիայն իր համար: Մեռել, անհետացել են սերունդներն ու ազգերը, բայց և մնացորդներին են կտակել իրանց ամբողջ ստեղծագործութիւնն ու հնարած գիւտերը: Իսկ ամէն մի օգտակար գիւտ, վաղ թէ ուշ, տարածւել և ընդհանուր մարդկութեան սեփականութիւն է դառել:

Այն գիտութիւնը, որ մեզ սովորեցնում է, թէ ինչպէս են նրանք տակաւ առ տակաւ հնարել այն բոլորը, ինչ մենք այժմ տեսնում ենք մեր շուրջը՝ կոչւում է պատմութիւն: Իսկ այն մարդիկ, որոնք զրի են առել իրանց ժամանակակից անցքերն ու զէպքերը, կոչւում են պատմագիրներ:

Բայց պատմագիրներ կարող էին լինել այն ժամանակ միայն, երբ մարդիկ կարդալ-զրել գիտէին: Սակայն չէ որ գրել-կարդալն էլ շատ ուշ հնարւած

ըութիւնն է:

Երբ նաւագնացութիւնը փոքր ի շատէ զարգացաւ ու եւրոպացիք բոլորովին պատահմամբ գտան Ամերիկան, յետոյ Աւստրալիան և ապա մի շարք նորանոր կղզիներ, նրանք տեսան, որ այդ երկրներում ապրում են մարդիկ, որոնք թէ իրանց արտաքինով և թէ ապրելու եղանակով բոլորովին տարբեր են մեր և ուրիշ երկրներում ապրող մարդկանցից: Այդ տեղերում ապրող մարդկային ցեղերից շատ շատերը համարեա թէ ոչնչով չէին տարբերում վայրի գազաններից: Նրանք ապրում էին անտառներում, ման էին գալիս բոլորովին մերկ, կերակրում էին հում բոյսերով, պտուղներով ու իրանց ձեռքն ընկած ամէն տեսակ որսով: Այդ մարդիկը ոչ բնակարաններ ունեին և ոչ էլ գործիքներ ու զէնքեր: Վայրի գազաններից պաշտպանւելու համար նրանք, իբրև զէնք, գործ էին ածում միմիայն վայցն ու բարը:

Աւելի մօտիկից ծանօթանակով այդ վայրենի ցեղերին, ուսումնասիրելով նրանց նիստ ու կացը, սովորութիւնները, եւրոպացիք նկատեցին, որ գրանց սովորութիւններից, անային գործիքներից ու զէնքերից շատերը ժամանակով գոյութիւն են ունեցել և նոյնիսկ այժմ էլ տեղ-տեղ գոյութիւն ունեն եւրոպական ազգերի մէջ:

Այդ գեռ բաւական չէ. նրանք նկատեցին, որ այդ ցեղերը բոլորն էլ քաղաքակրթութեան ու կուտուրայի միենոյն աստիճանի վրայ չեն գտնուում: Բոլորովին վայրենի գրութեան մէջ գտնուող ցեղերից զատ, կային և այնպիսիները, որոնք կուտուրապէն բաւական զարգացել էին արգէն և ազգ ու պետու-

բաներ են: Այդ իսկ պատճառով էլ պատմութիւնը երկու ժամանակաշրջանների է բաժանվում: Պատմական եւ նախապատմական շրջաններ:

«Պատմական» կոչում է այն շրջանը, երբ մարդիկ գրել-կարդալ են իմացել և իրանց ժամանակակից դէպքերի մասին, գրաւոր յիշատակարաններ թողել: Իսկ «Նախապատմական» շրջանն այն է, երբ մարդիկ անկարող են եղել իրանց կեանքի մասին որևէ գրաւոր յիշատակութիւն թողնել:

Անշուշտ, շատ էլ հեշտ բան չէ նախապատմական շրջանում ապրած մարդկանց կեանքն ուսումնամիրեն ու նրանց պատմութիւնը գրելը: Բայց և այնպէս գիտնականները դրա հնարն էլ են գտել և ներկայումս արդէն բաւականին մեծ չափով ուսումնասիրութիւններ են կատարւած նախապատմական մարդկանց մասին ու դեռ էլի շարունակում են կատարւել:

Այդ ուսումնասիրութիւնները կատարելու զիմասրաբար երկու միջոցներ կան: Առաջնը պելումներն են, այսինքն այն, որ շատ տեղերում գետինը պեղելիս, մանաւանդ հինաւուրց գերեզմանները փորելիս, մարդկային ոսկորների, կմախքի ու գանգի հետ՝ հողի միջից գանւում են ամանեղիններ, գործիքներ, զէնքեր, զարդեր և այլ շատ իրեր, որոնք պատկանել են, անշուշտ, այն ժամանակներում ապրող մարդկանց: Հէնց այդ գտնւած իրերից կամ նրանց մնացորդներից կարելի է լինում գուշակել ու հասկանալ, թէ ինչպէս են ապրել մեզնից հազարաւոր տարիներ առաջ ապրած մարդիկ:

Երկրորդ միջոցը՝ մինչև այսօր գեռ ևս ապրող զանազան վայրենի ցեղերի կեանքի ուսումնասիր-

թիւն էին կազմում:

Այդ բոլոր գիտողութիւններն ենթադրել են տալիս գիտնականներին, թէ արդեօք կուլտուրական ըստորագոյն աստիճանի վրայ կանգնած այդ ցեղերը ճիշտ այն կեանքն ու կենցաղը չեն վարում այժմ, ինչ վարել են տասնեակ հազար տարիներ առաջ այսօրւայ լուսաւորւած ու քաղաքակրթւած ազգերի նախապատմական հայրերը: Եւ միթէ կուլտուրական գարգացման այս աստիճանաւորումը, որ ներկայումս բացարձակ նկատւում է այդ նոր գանւած ցեղերի միջև, չէ՞ց տալիս զարգացման ու առաջադիմութեան այն ուղին, որով անցել են բոլոր լուսաւորւած ու քաղաքակրթւած ազգերը շատ հին անցեալում:

Այդ ենթագրութիւններով առաջ տանելով իւրանց ուսումնասիրութիւնները, գիտնականները բազմաթիւ ապացոյցներ են գտել որ յիրաւի, ամենաքաղաքակրթւած ազգերի նախահայրերն էլ մի ժամանակ ճիշտ այնպիսի մարդիկ են եղել ու այնպէս ապրել, ինչպէս են և ապրում են ներկայումս վայրենի ցեղերը:

Բազմաթիւ ուսումնասիրութիւնների շնորհիւ, այժմ այլևս պարզւած է նախապատմական մարդու ոչ միայն անհատական կեանքը, այսինքն այն, թէ որտեղ է նա ապրել ինչով կերակրւել, ինչպէս հագնւել կամ բնույթութիւններ գործ ածել և այն, այլ և նրա թէ հասարակական և թէ մտաւոր կեանքը, այսինքն՝ նրա ընտանիկան ու հասարակական կազմը, հաւատալիքները, գաւանանքը, լեզւի կազմւելը և այլն:

Նախապատմական շրջանում ապրած մարդկանց

կուլտուրայի զարգացման հէնց այդ պատմութիւնն է ահա, որ մենք պիտի սովորենք ներկայ գրքով, կը-
ցելով նրա հետ և հայկական այն առասպելներն ու
աւանդութիւնները, որ մինչև վերջին ժամանակները
սովորեցնում էին իբրև հայ ազգի իրական պատ-
մութիւն:



ԵՐԿՈՒ ԽՍԱ

ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վեց տարւայ ընդմիջումից յետոյ, նորից հրա-
տարակութեան ենք տալիս «Նախաւարդը եւ Հայկ
առասպելներ» վերնագիրը կրող մեր այս դասա-
գիրքը, որը 1908 թւականից ի վեր մեր ծիսական
դպրոցներում անփոխարինելի գասագրքերից մէկն է
եղել միշտ:

Այնուհետև համարեա թէ ամէն տարի նոր հրա-
տարակութիւն էր ունենում մեր այս դասագիրքը և
իւրաքանչիւր հրատարակութիւնը մի քանի հազար
օրինակից բաղկացած: Թիֆլիսի վերջին հրատարա-
կութիւնը լոյս տեսաւ 1920 թւականին, որն ամբող-
ջապէս Խորհրդ: Հայաստանի Հայկօպք գնեց:

Նրանից յետոյ, մասամբ Խորհրդ, երկրներում
դպրոցական ծրագրի և ուղղագրութեան փոփոխու-
թեան, մասամբ էլ Թաւրիզ տեղափոխելուս պատճա-
ռով, նոր հրատարակութիւն չի ունեցել այս դասագիր-
քը: Այժմ ի նկատի առնելով գաղութային դպրոցներում
զգացող խիստ մեծ պահանջը, կրկին լոյս ենք ընծա-
յում նրան, բայց շատ սահմանափակ քանակով:

Թիֆլիսի վերջին հրատարակութիւնից և ոչ մի

օրինակ չունենալով ձեռքի տակ և չը յիշելով, թէ նա քանի երրորդ հրատարակութիւնն էր, այս հրատարակութիւնը մենք անւանում ենք «Թաւրիզեան» հրատարակութիւն»:

Եւ այս հրատարակութիւնը մենք անում ենք առանց Գ. Վարդանեանի որևէ աշխատակցութեան կամ օժանդակութեան:

Ռ. Խան - Ազատ

Նախապատմական մարդու նիւթական կեանիք

1.

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ

Շատ հին ժամանակներում մարդիկ, բացի բնութեան տւած բարիքներից, ուրիշ ոչինչ չեն ունեցել: Նրանք չեն ունեցել ոչ հագուստ, ոչ բնակարան և ոչ էլ ապրելու այն բոլոր միջոցները, ինչ որ հազարաւոր տարիների ընթացքում մարդիկ հնարել ու շինել են:

Սկզբում մարդիկ համարեա ոչնչով չեին տարբերում գաղաններից: Գաղանները զեռ էլի ծածկւած են տաք մուշտակներով և կարող են ցրտից պաշտպանւել: Նրանք այդ բանից էլ զուրկ էին, ուստի և չեին կարողանում ապրել ամէն մի տեղ:

Առաջ մարդիկ ապրում էին միմիայն այնպիսի տաք երկրներում, ուր ձմեռ չկար և ամըողջ տարին տաք էր: Այդպիսի երկրների ընութիւնն էլ չափազանց հարուստ է և լիքն ամէն տեսակ բարիքներով: Այդտեղ մարդն առանց աշխատանքի ու դժւա-

ըռութեան թէ կերակուր և թէ ապաստան է գտնում,
և կարիք էլ չի զգում հագուստ հագնելու:

Հենց հիմա էլ այդպիսի տաք երկրներում ապ-
րում են շատ ցեղեր, որոնք ոչ մի հագուստի կարիք
չեն զգում և ման են գալիս մերկ, բորիկ ու բաց
գլխով:

Այդ վայրենի ցեղերից շատերը հաստատուն ըր-
նակարան կամ կացարան չունեն: Իրանց շուրջը
վիտացող գագաններից պաշտպանւելու համար, նր-
բանք ապաստան են գտնում ծառերի խիտ նիւթերի
վրայ, բարայներուն և բարաններուն:

Նախապատմական շրջանում ապրող մեր նախա-
պապերը ճիշտ այդ վայրենի. գրութեան մէջ էին.
Նրանք էլ գագանների յարձակումներից թագնուում և
գիշերներն անց էին կացնում ծառերի ճիւղերի վրայ
ու գանազան քարայրների մէջ:

2.

ՈՒՏԵԼԻՖԸ

Նախապատմական շրջանի մարդիկ սկզբում ոչ
մի աշխատանք անել չը գիտէին: Նրանք ոչ հերկել, ոչ
ցանել, ոչ հաց թիւել և ոչ էլ կերակուր պատրաստել
գիտէին: Այդ ժամանակ նրանք կերակրուում էին մի-
միայն ընութեան տւած բարիքներով: Ռւառում էին
պառւղներ, բոյսերի արմատներ կամ սերմեր և ծո-
վային ցամաքային ամէն տեսակ կենդանիներ՝
մուկ գորո, շուն, կատու և այն:

Այդ կենդանիներից շատերի անունն անգամ մեզ
զգւանք է պատճառում և մենք ոչ մի կերպ չենք
ուտի նրանց: Բայց դա միմիայն սովորութիւնից է
կախուած: Այս ըստէիս էլ այնպիսի ազգեր կան, ո-
րոնց համար մուկը, գորտը, մորեխն և ուրիշ այդ
տեսակ կենդանիներն ու գերունները նոյնքան հա-
մեզ ու սիրելի կերակուրներ են, որքան մեզ համար
վառիկը, ոչխարն ու կովը:

Մեր երկրումն էլ սովի ժամանակ մարդիկ սի-
րով ուտում են այնպիսի կենդանիներ, որոնց ուրիշ
ժամանակ երբէք չէին ուտիր:

Նախամարդիկ գտնուում էին ճիշտ սովի ժամանակ:
ապրող մարդկանց զրութեան մէջ. նրանք իրանց աշ-
խատանքով զեռ ևս ուտելիքներ պատրաստել շիմա-
նալով, քաղցից չը մեռնելու համար, ստիպւած էին
ուտելու այն տմէնը, ինչոր իրանց ձեռքն էր ընկնում:

3.

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ներկայումս երբ մենք մի նոր մարդու հետ
ենք ժամօթանում, իսկոյն հետաքրքրուում ենք իմա-
նալու, թէ նո որտեղացի է կամ որն է նրա հայրե-
նիքը: Նախամարդիկ ոչ միայն մշտական բնակա-
րաններ չունէին, այլ և մշտական հայրենիք էլ չու-
նէին: Նրանք ստիպւած էին շարունակ դէս ու դէն
ընկնել, երկրէ երկիր բափառել՝ կերտակուր գտնելու
նպատակով:

Հիմա էլ մարդիկ շատ անգամ սախաւած են իրանց հայրենիքը թողնել և օտար երկիր զնալ աշխատանք գտնելու համար: Օրինակ՝ զիւղերից գնում են թիֆլիս, Բագու կամ մի ուրիշ մեծ քաղաք: Մենք այդ մարդկանց համար չենք ասի, թէ նրանք թափառում են: Նրանք ունեն մշտական բնակավայր կամ հայրենիք, ուր կարող են մի որոշ ժամանակից յետոյ վերադառնալ: Բացի զրանից, թիֆլիս կամ Բագու գնացողը, երբ գործ կամ աշխատանք է ճարում, այլև երկար ժամանակ տեղից չի շարժւում:

Թոլորովին այլ էր նախամարդկանց կեանքը: Նրանք ոչ թէ գործ կամ աշխատանք էին փնտում, այլ այնպիսի տեղեր, ուր բնութիւնը կարող էր աւելի առատութեամբ կերակրել նրանց: Իսկ երբ ուտում, սպառում էին իրանց շուրջը գտնուած բոլոր ուտելիքները, նրանք իսկոյն թողնում, հեռանում էին մի նոր տեղ գտնելու:

Եւ այդպէս շարունակ ուտելիք փնտուելու նպատակով թափառած ժամանակ, մարդիկ միշտ դիտում էին բնութիւնը: Նրանք նկատում էին, թէ տարւայ որ եղանակին և որտեղ կարելիէ առատութեամբ այս ու այն պառւզները գտնել, երբ և որ բոյսի վրայ են լինում մեծ քանակութեամբ զեսուններ, ձիգուններ կամ այլ կենդանիներ:

Այդպէս ժամանակի ու տեղի համաձայն, մարդիկ շարունակ թափառում էին տեղից տեղ, միշտ մտածելով, որ քաղցած չմնան:

Թափառամկան կեանք վարող մարդկանց համար, մշտական բնակավայր կամ տուն ու տեղ ունենալը նոյնիսկ շատ ծանր բեռ կարող էր լինել որովհետեւ

նա ստիպւած պիտի լինէր, իր առւնը պահպանելու պատճառով, երկար ժամանակ միենոյն տեղում մնալ և սովոր մեռնել:

4.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԻՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԵՆՔԵՐԸ

Զանազան տեսակ գազաններով լիքն անտառներում թափառեն և ուտելիք որոնեն էլ շատ հեշտ բան չի: Բոլորովին անզէն մարդն այդպիսի տեղերում, փոխանակ իր համար կերակուր գտնելու, շատ անգամ կարող է հէնց ինքը գազաններին կերակուր զառնար:

Ներկայումս այդպիսի վտանգաւոր տեղ գնալիս, մարդիկ իրանց հետ վերցնում են կատարելագործւած լաւ հրացաններ, ատրճանակներ և այլ զանազան տեսակ զէնքեր: Բայց ոչ էր տեղ նախամարդուն հրացան ու այլ զէնքեր, երբ նրանք գեռ երկաթի կամ այլ մետաղների մասին իսկի հասկացողութիւն էլ չունեին:

Գազաններ չեղած տեղումն էլ ուտելիք ձեռք դցելը շատ հեշտ բան չէր: Օրինակի համար, երբեմն տեսնում են՝ ծառի վրայի պառւզներն այնքան բարձր են կախւած, որ ձեռք չի հասնում, կամ թէ, մի որևէ բոյսի համեղ արմատն այնչափ խորն է թաղւած հողի մէջ, որ անկարելի է մատներով ու եղանգներով հանել, և կամ թէ՝ այս ու այն ընկոյզն այն տստիճան պինդ է, որ չես կարող ատամներով կոտրել:

Այդպիսի և ուրիշ շատ աւելի մեռ դժւարութիւնների առաջ մարդիկ հիմա բոլորովին կանգ չեն

առնում. Նրանք ունեն շատ յարմար կերպով շինւած բահ, քլունգ, կացին, մուրճ, դանակ և այլ բազմաթիւ գործիքներ։ Նախամարդիկ այդ բոլորից և ոչ մէկը չունէին։ Նրանք իրանց առաջին գործիքներն ու զէնքերը գտան հէնց այն բնութեան մէջ, որտեղ գտել էին իրանց ուտելիքը։ Առաջին գործիքներն ու զէնքերն եղել են փայտն ու քարը։



Ն 1. Քարէ դանակներ

Փայտէ ձողով նախամարդիկ բարձր ծառից պառւզներ էին թափ տալիք, սրածայր փայտով գետնից արմատներ էին հանում, իսկ քարերով ամէն տեսակ պինդ կեղե ունեցող ընկոյզներ էին կտարում։ Նոյն փայտերով

ու քարերով նրանք նաև պաշտպանում էին գազաններից։

Այդ սկզբնական դործիքներն ու զէնքերը ձեռք բերելուց յետոյ, մարդիկ սկսում են կամաց-կամաց կտարելագործել նրանց և յարմարեցնել իրանց զանազան պէտքերին։

Մարդիկ երբ տեսնում են, որ կարելի է քարը կտարել մի ուրիշ քարի միջոցով, սկսում են քարի կտարներին զանազան ձեեր տալ։ Մի որևէ բան կը տրելու համար, քարի կտարի մի կողմը սրում և նրան դանակի ձև էին տալիս, իսկ ծակելու համար՝ նրան երկար ու սրածայր էին դարձնում։

Այդպիսի գործիքներ ու զէնքեր պատրաստելու համար մեծ ծառայութիւն էր մատուցանում կայծաքարը։ Դա շատ հեշտութեամբ է կոտրում ու զանազան սուր ձեեր ստանում։

Բացի փայտից ու քարից, գործիքներ ու զէնքեր պատրաստելու համար, նախամարդիկ օգտագում էին նոյնպէս կենդանիների ոսկրներից, ժանիքներից և եղջիւրներից։


5.

ԱՌԱՋԻՆ ՄՈՒՐՃՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Առաջին գործիքներն ու զէնքերը գանելուց յետոյ, մարդիկ սկսում են նրանց կամաց-կամաց կտարելագործել։ Ամենօրեայ փորձով նրանք նկատում են, որ երկար փայտով խփած հարւածը շատ աւելի

խիստ և ուժգին է, քան կարճ փայտով խփածը եւ այդ հանգամանքը մարդուն թելագրում է իր քարէ գործիքներին կոթ շինելու որպէսզի նրանց հարւածը զօրաւոր լինի: Կոթ շինելու համար փայտի պակասութիւն չկար, հարկաւոր էր միայն սրածայր քարի կտորը փայտի մի ծայրին ամրացնելու հնարը գտնել:

Կարիքն ու անհրաժեշտութիւնը հնարագէտ են դարձնում մարդուն: Եւ նախաժարդիկ կապելու մի-



Հ 2 Քարէ կացիններ:

ջոցներ են գտնում. զրա համար նրանք գործ են ածում զանգան բոյսերի (օրինակ՝ կանեփի) կամ ծառի թելանման կեղեննեցր: Նրանք քարի կտորը փայտի ծայրին կապելով, հնարել են իրանց առաջին մուրն ու կացինը: Եթէ փայտի ծայրին կապւած քարը

բութ էր, գործիքը մուրճի գեր էր կատարում, իսկ եթէ քարը մի կողմով սուր էր, նա դառնում էր կացին:

Այդ եղանակով պատրաստւած գործիքները, բացի ուժեղ հարւած ունենալը, շատ յարմար էին նոյն պէս ձեռքում բռնելու համար:

6.

Ո Ր Ս Ո Ր Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նախամարդն իր առաջին մուրճն ու կացինը հընարելուց յետոյ, այլևս զինւած էր: Նա հիմա առաջւան պէս չէր վախենում զազաններից, նա ոչ միայն համարձակւում էր նրանց հետ կուի բռնւել, այլև սրսում էր նրանց և իր աղքատիկ սեղանը հարստացնում: Այժմ նա հնարաւորութիւն ունէր սպանելու այնպիսի կենդանիներ, որոնցից նա առաջ փախչում ու պահւում էր:

Այդ ժամանակից մարդը սկսում է որսորդութեամբ պարապել:

Քարէ կացինով ու մուրճով գազաններին դիմագրելը թէկ աւելի հեշտ էր, բայց և այնպէս անգտանգ բան չէր. պէտք էր գազանին այնչափ մօտենալ, որ կացինը կամ մուրճի ծայրը հասնի նրան: Սակայն այդ րոպէին գազանը կարող էր կացնի հարւածը ստանալուց առաջ մարդու վրայ ցատկել ու նրան բզիկ-բզիկ անել:

Այդ բանը ստիպում է մարդուն մասնաւութեամբ, թէ չի կարելի արդեօք այնպիսի գէնք կամ գործիք հնարել

որով կարելի լինի որսին (թռչուն կամ գաղան) սպանել հեռւից, առանց նրան շատ մօտենալու:

Եւ մարդիկ հնարում են պարսատիկն ու նիզակը:
Պարսատիկը շինելու համար վերցնում էին մի մորթու կամ կաշւի փոքրիկ կաոր, երկու ծայրերը ծակում և այդ ծակերից թել անցկացնում, թելերն էլ պատրաստում էին զանազան ծառերի ու բոյսերի կեղեներից:



№ 3. Եղջիւրէ և ոսկը գործիքներ ու զէնք

Պարսատիկով մարդիկ քարեր էին նետում հեռու և ուժգին հարւածում: Դեռ մինչև այժմ էլ երեխաները այդ զէնքն իրը խաղալիք դորձ են ածում:

Խիստ թափով զցած ժամանակ նիզակն էլ բաւական հեռու կաբող է գնալ և ուժեղ հարւածեր Մեր

երկրում ապրող քիւրդերը հիմա էլ դեռ գործ են ածում նիզակ: Դա մի երկար ձող է, որի մէկ կամ երկու ծայրերին էլ երկաթէ սուր ոլաքներ են ամ-




№ 4. Պարզ տեսակի նետ ու աղեղ:

բացրած: Զողի մէջտեղից բռնում, ձօճում են օդի մէջ և թափով նետում ու հարւածում թշնամուն: Նախամարդիկ այդ ձևով էին շինում իրանց

Նիզակը, այս տարբերութեամբ միայն, որ երկաթէ սլաքների փոխարէն, նրանք ձողի ծայրերին ամրացնում էին սուր քարի կամ ոսկորի կտորներ:

Ժամանակի ընթացքում այդ պարսատիկն ու նիզակը էլ չեն գոհացնում որսորդ մարդուն, որովհետև զրանց երկար գործածելուց ձեռքը յոգնում էր: Այդ անյարմարութիւնից էլ նա ազատւում է, մի նոր գործիք ննարելով:



№ 5. Բարդ տեսակի աղեղներ:

Նա վերցնում է ծառի դալար, բայց առաջական ճիւղը, ծուռմ է նրան ու կիսաշրջանի ձև տալիս: Յետոյ ճիւղի թեքւած ծայրերը նա ամուր կապում է բարակ թոկով: Այդ եղանակով ահա պատրաստ է աղեղը:

Աղեղի միջոցով նիզակի նետելը շատ ու շատ

նեշտանում է: Բայց այս անգամ նիզակն առաջւանից շատ աւելի կարճ է լինում և մէկ ծայրին միայն սլաք հազցրած: Այդ ձեռվ պատրաստւած նիզակը կոչւում է նիզ:

Աղեղի շինելն ու գործածելը շատ հեշտ է: մինչև օրս մեր մանուկներն էլ յաճախ շինում ու գործ են ածում նրան, իբրև խաղալիք: Նետը գնում են աղեղի վրայ և բութ ծայրն ամրացնում թոկին, որ կոչւում է լար: Յետոյ ձախ ձեռքով բռնում են աղեղը, իսկ աջով բռնելով նետի բութ ծայրը լարի հետ միասին, լաւ քաշում ու յանկարծ բաց են թողնում: Այդ ձեռվ գցւած նետը բաւականին հեռու է թռչում և նպատակին հարւածում:

7.


ԳԱՐԵ ԴԱՐ

Նախամարդու հնարած գործիքներն ու զէնքերը շատ կոշտ, կոպիտ և անյարմար բաներ էին: Նրանցով չէր կարելի ոչ բարդ աշխատանք կատարել և ոչ էլ արագ աշխատել: Սակայն նախամարդու կեանքն էլ շատ պարզ էր, և մարդիկ շատ ու շատ բաների իսկի կարիք էլ չունէին:

Ոյսպիսի գործիքներով ու զէնքերով մեր նախապերն աշխատել ու եօլա են գնացել ամբողջ հազարաւոր տարիներ, մինչեւ որ վերջապէս հնարը գրետել են աւելի յարմարը պատրաստելու:


Շարունակ զանազան տեսակ քարերից գործիք-

Ներ պատրաստելիս մարդիկ նկատում են, որ տարբեր տեսակի քարերը միմեանց տաշում ու յղկում



Հ. 6. Յղկած քարէ կացիններ:

Են. Այդ ժամանակից ահա, նրանք սկսում են իրանց խորտուբորտ գործիքները յղկել և հետզհետէ հնարել



Հ. 7. Երկանք

Են յղկւած քարէ կացիններ, սանդ. երկանք և ուրիշ շատ անհրաժեշտ գործիքներ ու զէնքեր:

Նախապատմական այն ամբողջ շրջանը, երբ մարդիկ քարէ գործիքներ ու զէնքեր են գործածել, կոչւում է բարէ դար: Այդ քարէ դարը տևել է տասնեակ հազարաւոր տարիներ և բաժանուում է երկու մեծ շրջանների. առաջինը՝ հիմն բարէ դար, երբ դեռ մարդիկ կոշտ ու կոպիտ գործիքներ էին գործածում, իսկ երկորդը՝ նոր բարէ դար, երբ մարդիկ յղկւած քարէ գործիքներ էին գործածում:

8.

ՄԻՍՆ ՈՒ ԶՈՒԿԸ ՊԱՇՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Ինչպիսի զէնքեր ու գործիքներ էլ հնարում էին նախամարդիկ, դարձեալ նրանք երկար ժամանակ դեռ կիսաքաղցած կեանք էին վարում: Միմիայն որսի յոյսով ապրող մարդու վիճակը ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

Պատահում էր, որ մի օր որսը չափազանց առատ էր լինում, բայց և պատահում էր, որ որսորդը օրերով ոչինչ չէր կարողանում գտնել:

Մարդիկ դեռ չգիտէին, թէ ինչպէս աւելցած միսը կամ ձուկը միւս օրւայ համար պահել:

Մենք հիմա նրանց երկար ժամանակ պահպանելու շատ միջոցներ զիտենք: Օրինակ՝ մսից զաւուրմա, երշիկ (կալբաս) և ապուխտ ենք պատրաստում, ձուկը չորացնում կամ աղն ենք զնում, բանջարեղէնը քացախի մէջ ենք պահում, պատուղներից կոնսերվներ պատրաստում և այլն: Նախամարդիկ այդ բո-

Երբի մասին ոչ մի գաղափար չունեին։ Նրանք ամէն բան ուտում էին հում, հէնց այնպէս, ինչպէս որ գտնում էին։ Եթէ առատ որսից աւելացածը փորձում էին միւս օրերի համար պահել, ամէն ինչ հոտում փշանում էր։

Շատ ու շատ երկար դարեր են անցել, մինչև որ մարդիկ միսն ու ձուկը չորացնելու հնարն են գտել։ Նրանք նկատել են, որ քարէ կամ ոսկորէ դանակով բարակ կտրւած միսը, արեգակի այրող ճառագայթների տակ մնալով, ոչ թէ հոտում, այլ թմրշկում, չորանում է և համն էլ դուրեկան է դառնում։

Այդ ժամանակից մարդիկ հետզհետէ սովորում են միսն ու ձուկը չորացնել, ապուխտ պատրաստել, և այդպիսսկ իրանց շատ աւելի ապահով զգալ։

Դրանից յետոյնրանք կարող էին թէ «սև օրւայ» համար ուտելիք պահել, և թէ որսորդութեան կամ ձկնորոսութեան գնալիս՝ հետները պաշար վերցնել։

9.

Կ Ր Ա Վ Կ Ի Գ Ի Ւ Տ Ը


Քարէ դարում մարդու արած գիւտերից ամենանշանառը կրակ վառելու գիւտն է։

Հիմա կրակ վառելն այնչափ սովորական ու հեշտ բան է, որ ամենափոքր երեխան էլ գիտէ։ Դրա համար հարկաւոր է միայն լուցկի ունենալ Ո՞վ չգիտէ, թէ ո՞ր աստիճան անհրաժեշտ բան է կրակը։ Կրակով մենք տաքանում ենք, հաց ենք թխում,

կերակուր պատրաստում, զանազան մետաղներ ենք հալում ու նրանցից հազար ու մի տեսակ բան շի-

ՀՀ 877-2008 /

ՀՀ 9-2012 /



Նկ. 10 և 11. Կրակահան գործիքներ։

նում։ Նախամարդիկ այդ բոլորի մասին, ուեռ ոչ մի

հասկացողութիւն չունէին, որովհետեւ կրակ վառել չգիտէին:

Այդպիսով այն ժամանակւայ մարդիկ գիշերները ճրագ ունենալու հնարաւորութիւնից էլ զրկւած էին. Հենց որ գիշերւայ մութը վրայ էր հասնում, մարդիկ խաւարի մէջ էին թագւում և ամբողջ գիշերը սրտի դողով անցկացնում:

Նրանք շարունակ սարսափի մէջ էին, մտածելով, թէ ահա շուրջը վիտացող ու ոռնացող գաղաններն իրանց վրայ կը յարձակւէն. Այդ գրութեան մէջ մարդիկ անհամբեր սպասում էին արեգակի ծագելուն, որ լոյսը բացւի և իրանք հնարաւորութիւն ունենան գաղաններից պաշտպանւելու:

Նախամարդկանց համար, սակայն, կրակը մի բոլորովին անծանօթ բան չէր:

Նրանք շատ վաղ էին նկատել, թէ ինչպէս որոտի ժամանակ, երկնքում մի ինչ որ բան է փայլատակում, և ինչպէս այդ փայլակն երբեմն ծառերի վրայ է ընկնում, վառում ու նրդեներ առաջացնում: Բայց այդպիսի կրակը նախամարդուն վախ ու սարսափ էր միայն պատճառում: Նրան պէտք էր այն տեսակ կրակ, որ ուզած ժամանակ կարողանար թէ վառել և թէ հանգներ:

Այդպիսի կրակ ստանալու միջոցն էլ մարդիկ դառն վերջապէս:

Երբ փայտից, քարից և սսկորից շարունակ գործիքներ էին շինում, նրանք տեսան, որ չոր փայտի երկու կոռորներ երկար ժամանակ միմեանց քսելիս,

նախ խիստ տաքանում, ապա վառւում ու կրակ են դառնում:

Այդ բանը նկատելուց յետոյ, մարդիկ հնարել են այնպիսի գործիքներ, որոնցով կարելի էր տւելի հեշտ կերպով կրակ վառեր

Այդ գործիքներից ամենաշատ տարածւածը մի տափակ փայտի կտոր էր մի քանի ծակոտիներով:

Ծակոտիներից մէկն ու մէկի մէջ մի չոր ձողիկ էին մտցնում ու ձեռքով այնքան պտտեցնում, մինչեւ ձողիկի ծայրը կը վառւէր և կրակ կը ստացւէր. Ստացւած այդ կրակով նրանք նախ վառում էին հեշտ վառող նիւթեր. ծառի չոր տերեներ, խոտ կամ յարդ և յետոյ վրան փայտեր դնում:

Մինչև օրս էլ մի քանի վայրենի ցեղեր դեռ հէնց այդ եղանակով են կրակ ստանում:

Շատ տւելի ուշ, կրակ ստանալու համար մարդիկ գործ են ածել կայծքար և արեթ:

10.


ՄԱՐԴՈՒ ԱՌԱՋԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Կրակի տւած օգուտները շափականց շատ էին: Մարդիկ ցուրտ ժամանակ տաքանում էին, գիշերները կրակի մօտ պառկելով, գաղաններից բոլորովին ապահով էին մնում:

Նրանք այլես կարող էին գնալ և այն զիսի ցուրտ երկրներում ապրեր ուր տառջ անկարող

էին, կրակով կարող էին միս, պտուղ և զանազան
ուտելիքներ եփել, որ անշուշտ աւելի համեղ ու օգ-
տակար է, քան թէ հում:

Կրակի բազմաթիւ օգուտները տեսնելով, մար-



Նկ. 12. Վայրենիների բնակարանի մի տեսակը:

դիկ սկսում են նրան Աստծու տեղ պաշտելու Նրանք
մտածում են մի այնպիսի հնար գտնել, որ կարողա-
նան կրակաստածը երկար ժամանակ վառ պահել:

Քամի եղած ժումանակ և անձրեային օրերում,
կրակը կամ ճրդեն էր առաջացնում և կամ հանդչում
էր:

Բացի դրանից փայտերը իրար քսելով կրակ
ստանալու եղանակը շատ յոգնեցուցիչ էր:
Նրանք սկզբում փայտից կամ քարից պատւար
էին շինում քամու փշած կողմը, բայց յետոյ տես-

նելով, որ քամին միշտ միենոյն կողմից չէ փշում,
նրանք կրակի չորս կողմից պատեր էին շինում ու
վրան էլ ծածկում:



Նկ. 13 Եղեգնեայ բնակարաններից գիւղ:

Այդ եղանակով մարդիկ հետզհետէ սովորեցին
բնակարան կամ տուն շինել:

Շինւած տունը սկզբում ծառայում էր մի-
միայն կրակաստածը միշտ վառ պահելու հա-
մար: Յետոյ երբ մարդիկ ցրւեցին աւելի ցուրտ
երկրներ, նրանք տունը շինում էին իրանց բնա-
կութեան համար:

Բնակած երկրի ու տեղի համաձայն, մարդկանց

շինած բնակարաններն էլ սաստիկ տարբերում էին
միմեանցից:

Տաք երկրներում ապրողների բնակարանները
շատ անհաստատ բաներ էին, նրանք շինուում էին
գետնի երեսին, փայտի ձողերով: (Տես Նկար 12):




Նկ. 14. Վայրենիների բնակարանի մի ուրիշ տեսակը:

Յուրա երկրների բնակարանները, ընդհակա-
ռակը՝ գետնափոր և շատ աւելի հաստատուն էին
լինում: Ծովերի, լճերի ու մեծ գետերի մօտ ապրող
մարդիկն էլ բոլորովին ուրիշ տեսակ բնակարաններ
էին շինում:

Թունաւոր միջատներից ու այլ զանազան վնա-
սակար կենդանիներից ապահով մնալու համար, մար-
դիկ բնակարանները շինում էին հենց ջրի մէջ:

Ափեց ոչ շատ հեռու, ջրի մէջ նրանք հաստ գե-



Նկ. 15. Ջրի վրայ շինուած տուն:

բաններ էին տնկում և դրանց դուրս ցցւած գլուխ-
ների վրայ բնակարան շինում:

Այդպիսի բնակարանը կամ տունը ափի հետ
միացւում էր կամուրջով, կամ թէ չէ մարդիկ պար-
զապէս մակոյկներով էին ել ու մուտ անում:

11.

ՀԱԳՈՒՍ

Նախամարդիկ հագուստ էլ չունէին։ Տաք երկըր-
ներում ապրելով, նրանք հագուստի իսկի կարիք
չէին զգում։ Այս բոպէիս էլ այդպիսի երկրներում
ապրող շատ ցեղեր բոլորովին մերկ են ման գալիս։

Երբ մարդիկ սովորեցին կրակ վառել ու բնա-
կարաններ շինել, նրանք սկսեցին հետզհետէ աւելի
ու աւելի ցուրտ երկրներ գնար Բայց ցուրտ եր-
կրում առանց հագուստի ապրելը շատ դժւար բան էր.
Խօ չէր կարելի միշտ կրակի կողքին նստել։ Այդպի-
սով մարդ կարող է քաղցած մնար։

Այդ ժամանակ մարդիկ նկատում են, որ գաղան-
ները ցրտից բոլորովին չեն վախենում, որովհետև
նրանք տաք մուշտակ ունեն։ Հետեւելով նրանց օրի-
նակին, մարդիկ սկսում են դրանից յետոյ իրանց
սպանած գաղանների մորթով ծածկւել։

Բայց այդ ձեփ հագուստը նախամարդուն չէր կա-
րող գոհացնել, որովհետև չգաբաղած մորթը թէ կոշտ
է և թէ մարմնին լաւ չի կպչում։ Հետզհետէ նրանք
սովորում են դաբաղել մորթը։ Առաջ նրանք քերում
էին մորթու տակը, թրջում, ձեռքի մէջ ճմոռում ու
կակացնում էին։ Բայց յետոյ, երբ ծանօթացան զա-
նազան բոյսերի, օրինակ՝ գղտորի հետ, նրանք դը-
րանց միջոցով աւելի լաւ կարողացան փափկացնել՝
դաբաղել իլանց մորթէ հագուստը։

Աւելի ուշ, մարդիկ սովորում են թելանման
բոյսերից, կամ ծառերի բարակ կեղևներից կտորներ


գործել ու նրանցից հագուստ կարել։ Մարդու առա-
ջին անգամ գործած կտորները չափազանց հասարակ



Նկ. 16. Մորթով ծածկւած վայրենի։

ու պարզ բաներ էին, ինչպէս օրինակ՝ այսօրւան

նիլոպը կամ խսիրը: Շատ ուշատ ուշ են նրանք սովորել բրդից մանւածքներ ու գործածքներ պատրաստելը:



Նկ. 17. Մորթով ծածկւած վայրենիներ:

Կարելու համար էլ իբրև ասեղ, մարդիկ՝ գործ էին ածում ծառերի փշեր, կենդանիների և մանաւանդ ձկների բարակ սոսկըներ:

Մետաղների հետ զեռ ևս ծանօթ չլինելով, նըրանք անկարսող էին ասեղներ ունենալ:

12.

ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Մետաղներ հալեն ու նրանցից զանազան իրեր պատրաստելը մարդիկ սովորել են շատ ուշ ժամանակ, երբ արդէն լաւ ծանօթ էին կրակի գործածութեան հետ:



Նկ. 18. Բրոնզէ գործիքներ:

Բնութեան մէջ մարդը շատ վաղ ժամանակից էր նկատել այս կամ այն մետաղը, բայց քանի դեռ կը-

բակ չունէր, նա չգիտէր էլ թէ մետաղները կարող են հալւել:

Մարդիկ ամենից աւելի ծանօթ էին պղինձին, որովհետև պղինձն է ամենից շատ պատահում բնութեան մէջ:

Սակայն մաքուր պղինձը շատ կակուղ է. Նըրանից անկարելի էր գործիքներ ու զէնքեր պատրաստել: Սկզբում մարդիկ այդ փայլուն մետաղը գործ էին ածում միմիայն զարդարանքի համար: Կըրակը գտնելուց յետոյ, նրանք նկատում են, որ պղինձը, անազի կամ կլայնելի հետ միասին հալելով, կարծրութիւն է ստանում, և շատ յամար է դառնում գործիքներ շինելու:

Պղնձի ու անազի այդ խառնուրդը կոչում է բրոնզ:


Բրոնզը բնութեան մէջ պատրաստի չէ պատահում: Պղինձն ու անազը միասին հալելով՝ կարելի է ստանալ բրոնզ: Մարդիկ շատ ուշ հասկացան այդ բանը:

Հասկանալուց յետոյ, նրանք այլ ևս իրանց գործիքների ու զէնքերի մեծ մասը սկսում են բրոնզից պատրաստել: Հէնց այդ ժամանակից էլ մարդկութեան պատմութեան մէջ սկսում է բրոնզի գարը. որ նոյնպէս հազարաւոր տարիներ է տեսում:

Բրոնզի հետ միաժամանակ մարդիկ ծանօթացել են և երկաթի հետ: Բայց երկաթի հալելն ու մաքրելը շատ աւելի գժւար գործ է, քան բրոնզ պատրաստելը: Դրա համար էլ բրոնզից շինած գործիքներն ու զէնքերը շատ վաղ և աւելի են տարածւել, քան երկաթից շինածները:

Բայց երբ մարդիկ երկաթ հալելը սովորեցին,

իրանց բոլոր գործիքներն ու զէնքերը սկսեցին երկաթից պատրաստել: Երկաթը բրոնզից շատ աւելի դիմացկուն և լաւ էր:



Նկ. 19. Բրոնզէ սրեր ու զաշոյն:

Այդ ժամանակից էլ սկսում է մայդկային պատմութեան երկարէ դարը, որ շարունակուում է մինչև այսօր: Հիմա բրոնզից պատրաստում են միմիայն զարդարանքներ ու կտհկարասիներ: Բրոնզէ ու քարէ գարերում, մարդիկ բոլորովին չհրաժարւեցին իրանց քարէ գործիքներից: մինչև օրս էլ շատ տեղերում դեռ գործ են ածւում քարէ սանդն ու երկանիք:

13.

Ա Մ Ա Ն Ե Ղ Ե Ն

Նախապատմական մարդու գործիքների մէջ ամանեղէնը նոյնպէս շատ անհրաժեշտ բան էր:

Հնումը մարդիկ, երբ գեռ չնորհքով գործիքներ չունէին, իրանց ամանեղէնն էլ բնութիւնից էին վերցնում: Նրանք ամանի տեղ գործ էին ածում ծառի տերևներն ու կեղեր, տափաք քար, վայրի դդումներ,



Նկ. 20. Կաւէ ամաններ:

կակօսի կեղե, մեռած մարդու և կենդանու գանգ և այլն:

Իրանց առաջին գործիքները հնարելուց յետոյ միայն, մարդիկ կամաց-կամաց սովորել են փայտից աւելի յարմար ամաններ շինել: Բայց ոչ այդպիսի ամաններով և ոչ էլ ճիւղերից հիւսած կողովներով կարելի էր կրակի վրայ ջուր տաքացնել կամ կերակուր եփել: Նրանք իսկոյն կայրւէին:

Այդ հնարաւոր եղաւ այն ժամանակ միայն, երբ մարդիկ սովորեցին կրակից չայրւող կաւէ ամաններ պատրաստել:

Կաւի ու նրան թրծելու եղանակի հետ նոյնպէս մարդիկ պատահմամբ են ծանօթացել:



Նկ. 21. Կաւէ աման, որի վրայ երեսում են ճիւղերի հիւսածքի հետքերը:

Զանազան բաներ լւանալիս նրանք տեսել էին, որ մի տեսակ կարմիր հող կայ, որը միւս տեսակ

հողերի նման թափանցիկ չէ: Այդ կարմիր հողը, վրան թաց բան գնելիս, միմիայն երեսից էր թրջում, իսկ մէջը ջուր չէր անցնում: Դա կաւն էր:

Այդ հանգամանքը նկատելով, մարդիկ ցանկացել են իրանց՝ ճիւղերից հիւսած՝ կողովները, կաւի միջոցով, անթափանց գարձնել Դրա համար կաւից ցեխ են պատրաստում ու նրանով ծեփում կողովի ներսը և ապա թողնում որ ցեխը չորանայ: Այդպէս՝ կաւով ծեփած կողովի մէջ այլևս հնարաւոր էր լինում ջուր լցնել:

Յետոյ մարդիկ փորձում են այդպիսի կողովով կրակի վրայ ջուր տաքացնել և տեսնում են, որ ծեփած կողովի փայտեղէն մասը վառւում, ոչնչանում է, իսկ կաւը եփում, քարանում, այսինքն թշտում է:

Կաւ թրծելն այդպէս պատահմամբ սովորելուց յետոյ, մարդիկ հետզհետէ կաւից բազմաթիւ ու բազմատեսակ կուժ, կծուճ, բղուզ, ափսէ և այլ ամաններ են հնարել, որ մինչեւ օրս էլ գեռ գործ են ածւում:

Մետաղից ու ապակուց ամանեղէն շինելը մարդիկ սովորել են շատ աւելի ուշ ժամանակներում:

14.

ԶՈՒՐ ԵՌԱՑՆԵԼԸ

Քանի գեռ մարդիկ կաւէ ամաններ չունէին, նրանք բոլորովին զուրկ էին ջուրը եռացնելու հնարաւութիւնից: Խակ մինչեւ որ ջուրը չեռացւի, անը կարելի է մի որ և է բան եփել: Այդ պատճառով էլ մարդիկ, կրակը գունելուց յետոյ, երկար ժամանակ

միմիայն խորոված կերակուրներ զիտէին պատրաստել Խորովում էին թէ միուր, թէ ձուկը, թէ պտուղը և թէ ամէն բան:



Նկ. 22. Սալ-քարի վրայ հաց են թխում:

Նրանք խորովելու մի քանի եղանակներ զիտէին. խորովում էին ուտելիքը կամ ուղղակի կրակի վրայ զնելով, կամ փայտէ շամփուրների անցկացնելով և կամ տաքացրած տափակ քարի վրայ դարսելով:

Հայն էլ քարերի վրայ էին թխում: Կրակի վրայ մի տափակ քար էին զնում ու թողնում, որ լաւ տաքանայ: Յետոյ քարի վրայ խմորի զնդակներ էին շարում և փայտի ծայրով այս ու այն կողմ շուռ տալիս, մինչեւ որ կեփւէին:

Այդ ժամանակներում, մարդիկ ջուրն էլ քարերի միջոցով էին տաքացնում:

Նրանք փայտէ ամանը կիսով չափ լցնում էին

Ջըով և նրա մէջ՝ կրակի վրայ լաւ տաքացրած քարեր գնում: Քարերի տաքութիւնը ջրին էր անցնում, որից յետոյ սառած քարերը ջրից հանում ու նրանց տեղ ուրիշ տաքացրածներ էին գնում: Եւ այդ գործողութիւնը մի քանի անգամ կրկնելուց յետոյ, ջուրը բաւականին տաքանում էր և գործածելի դառնում:

Մինչեւ օրս էլ կան ցեղեր, որոնք գեռ ևս տաքացրած քարերի միջոցով են թէ ջուր տաքացնում և թէ հաց թխում:

15.

Զ Ա Ր Դ Ե Ր

Զարդարւելն էլ մարդու ամենազլիսաւոր պահանջներից մէկն է: Դրա պահանջը մարդիկ շատ աւելի վաղ են զգացել քան հագնւելու պահանջը:

Հագուստի մասին մարդիկ սկսել են մտածել այն ժամանակ միայն, երբ ցուրտ երկրներ են տեղափոխւել: Իսկ զարդարւելու, գեղեցիկ երևալու զգացումը միշտ և ամեն տեղ էլ եղել է մարդու մէջ: Այդ զգացումը բնածին է բոլոր կենդանիների մէջ:

Տարւայ որոշ ժամանակներին, համարեա թէ բոլոր գաղաններն ու թոշունները փոխում են իրանց մազերն ու փետուրները և գեղեցկանում են: Ուրիշ խօսքով՝ նրանք զարդարւում են բնութեան տւած զարդերով:

Թէ մարդկանց մէջ էլ զարդարւելու ցանկութիւնը բնածին է, բայց բնութիւնը նրանց չէ տւել

ոչ թոշունների գեղեցիկ փետուրները և ոչ էլ գաղանների փայլուն մորթը: Դրանց փոխարէն բնութիւնը մարդուն տւել է խելք, որի շնորհիւ նա կարողացել է զարդարւելու շատ միջոցներ գտնել:



Նկ. 23. Զարդարւած կին:

Նախամարդիկ իրանց զարդարանքն էլ բնութիւնից էին վերցնում: Իրեկ զարդ նրանք գործ էին ածում ծաղիկներ, տերեներ, գունաւոր ժըմմունք, փայլուն փետուրներ ու մորթեր, մեռած մարդու կամ կենդանիների ատամներ և այլն:

Գեղեցիկ երեալու նպատակով, մարդիկ շատ անգամ աշխատում էին այս կամ այն թոշունին կամ

կենդանուն նմանւել: Դրա համար նրանք սանրւելու զանազան ձևեր էին հնարում, դէմքերն ու մարմինը ներկում էին և այլ միջոցների գիմում:

Հէսց հիմա էլ դեռ կան ցեղեր, որոնք զարդարւում և իրանց դէմքն ու մարմինը ներկում են այնպէս, ինչպէս որ մեր նախապապերը անում էին տասնեակ հազարաւոր տարիներ առաջ:



Նկ. 24. Զարդարւած վայրենիներ:

Մետաղների, թանկադին քարերի և ապակու հետ ծանօթանալով, մարդիկ հետզհետէ կատարելագործել են իրանց զարդարանքն էր:

Ուկին ու արծաթն երկար ժամանակ միմիայն զարդարանքի համար էին գործ ածւում. իբրև զբամբար էին ածւում ուրիշ նիւթեր կամ առարկաներ:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԸՆՏԱՆԵՑՆԵԼԸ

Նախապատմական մարդու կիսաքաղցած զբութիւնը բաւականին լաւ անում է, եթէ նա սովորում է ժամանակի ընթացքում վայրի կենդանիներին ընտանեցնել:

Շարունակ զանազան կենդանիների հետ գործ ունենալով, մարդիկ տեսնում են, որ կենդանիներից մի քանիսը կերակրում են այնպիսի ուտելիքներով, ինչով որ իրանք են կերակրում:


Այդ կարգի կենդանիներից է ըստն առհասարակ շատ քչով է բաւականանում, և եթէ նրան մի քանի ոսկոր զցեն, նա այլևս չի կամենայ հեռանար:

Այդ բանը նկատելուց յետոյ, մարդիկ սկսել են շներին ընտանեցնել: Նրանք մեծ բազմութեամբ շներ էին պահում և չաղացնում ուտելու համար:

Այդ ժամանակից մարդու աշխատանքը բաւականին թեթեանում է: Փոխանակ օրերով որսի յետեկց ման գալու և զլուխը վտանգի զնելու, նա իր պահած շներն էր ուտում, մանաւանդ որ շան միսը, ասում են, շատ համեղ է:

Շան ընգունակութիւնների հետ լաւ ծանօթանալուց յետոյ, մարդիկ սկսում են նրան ծառայեցնել զանազան պէտքերի համար, օրինակ՝ որսի են տանում, գազաններից պաշտպանում և այլն:

Շան նման խոզն էլ ուտելիքի կողմից պահանջկոտ չէ: Նա էլ ամենակեր է: Բացի զբանից նա շնից



Ակ 25. Վարդինիների ուսուլութիւնը՝

աւելի շուտ է չաղանում. Մարդն ընտանեցնում է նաև խոզը և յետոյ շատ կենդանիներ:

Կենդանիներին ընտանեցնելու մի քանի միջոցներ կան. Ամենից շատ տարածւածն այն է, որ կենդանու ձագուկներին բռնում, պահում, մեծացնում են:

Որչափ էլ մարդիկ շատ կենդանիներ ընտանեցրել են արդէն, բայց և այնպէս դեռ ևս բազմաթիւ թռչուններ ու գազաններ կան, որոնց մինչև օրս մարդիկ չեն կարողացել ընտանեցնել. Այդպիսիներին մենք վայրի ենք անւանում:

Կենդանիներ ընտանեցնելուց յետոյ, մարդիկ ուտելիքի կողմից թէե ապահով էին ու պէտք չունէին որսի համար այս և այն կողմ զնալ, բայց դեռ երկար ժամանակ նըանք դարձեալ շարունակում էին թափառական կեանք վարել: Դրա պատճառն այն էր, որ ընտանեցրած կենդանիների մեծ մասը, ինչպէս օրինակ՝ ոչխարը, այծը, կովը, ձին և այլն, նոյնպէս թափառական կեանք վարողներ էին:

Մարդիկ նկատել էին, որ այդ կենդանիները, դեռ վայրենի վիճակումն էի, մեծ խմբերով էին տպւում և շարունակ տեղից տեղ չւում, որպէսզի չկոտորւեն խիստ տաքից կամ ցրտից:

Այդ հանդամանքից ստիպւած մարդիկ շարունակում էին իրանց թափառական կեանքը:

Հէնց այժմ էլ մեր երկրի այն ժողովուրդները, որոնք խաւարածութեամբ են պարտպում, ամառը քռչում են դէպի սարերը, իսկ աշնանը՝ դէպի գաշտավայրերը:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Անտառներում թափառելով ու շարունակ պտուղներ, հատիկներ և արմատիքներ ուտելով, նախամարդիկ շատ վաղ ձանօթացել էին նաև բոյսերի զանագան տեսակների հետ նրանք նկատել էին, թէ ինչպէս մի վայր ընկած սերմի տեղը նոր բոյս էր աճում և նոյնանման պտուղներ ու սերմեր տալիս: Բայց սկզբում մարդիկ այդ բանի վրայ մի առանձին ուշադրութիւն չէին դարձրել. նրանց վլխովս անգամ չէր անցնում, թէ կարելի է սերմեր ցանել ու մեծ քանակութեամբ բերք ստանար:

Նախամարդիկ գեռ այն գիտակցութեանը չէին հասել, որ կարողանային վաղան ու միւս օրւան համար մտածել նրանք ապրում էին միմիայն այս օրւան հոգսերով: Այսօրւան ամէն մի պտուղն ու սերմը նրանց համար չափազանց մեծ արժեք ունեին: Նրանք չէին կարող սիրտ անել ձեռքն ընկած այսօրներանք գետնում թաղել այն յոյսով, թէ մի պաշարը գետնում թաղել այն յոյսով, թէ մի ամսից յետոյ նոր բերք կը ստանան: Բացի գրանց նրանք չէին կարող իրանց ցանքսի մօտ՝ ամիսնից քաղցած նստել ու պահապան դառնար: Իսկ եթէ պահապան չգառնային, ցանքը կը փչացնէին ամեն կողմ վխտացող կենդանիներն ու թռչունները:

Մարդիկ երկրագործութեամբ սկսել են պարագել այն ժամանակ միայն, երբ ընտանեցրած կենացների շնորհիւ, նրանք ուտելու բաւականին առատ թէ միս և թէ կաթ են ունեցել: Այդ ժամանակ

նրանք այլևս չէին վախենում, թէ սովոր կը մեռնեն և կարող էին ցանքսի հասնելուն սպասել:

Ամենից առաջ, մարդիկ ցանել են այնպիսի սերմեր, որոնք թէ խոշոր են և թէ կարձ ժամանակում են հասնում: Այդպիսի սերմերից են՝ բուկլան, լոբին, եզիպտացորենը և ուրիշ հացահատիկներ:

Պտղատու ծառեր ցանելու կամ տնկելու մասին մարդիկ սկզբում իսկի չէին էլ մտածում, որովհետեւ դրանց պտուղները ստանալու համար շատ երկար տարիներ սպասելու էին:



Նկ. 26 և 27. Ետինական արօների անսակները:

Ազգբում նրանք ցանում էին առանց որևէ գործիքի. սերմը հողի մէջ թաղում էին ձեռքերով և բերքն էլ ձեռքերով քաղում: Բայց յետոյ, ցանելու գործին հետզետէ ընտելանալով, նրանք նկատում են, որ եթէ գետինը լաւ է քանդած ու հողը փափառ կացրած, բոյսերն աւելի լաւ են աճում ու բերքն էլ

17.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Անտառներում թափառելով ու շարունակ պտուղներ, հատիկներ և արմտիքներ ուտելով, նախամարդիկ շատ վազ ծանօթացել էին նաև բոյսերի զանազան տեսակների հետ. Նրանք նկատել էին, թէ ինչպէս մի վայր ընկած սերմի տեղը նոր բոյս էր աճում և նոյնանման պտուղներ ու սերմեր տալիս: Բայց սկզբում մարդիկ այդ բանի վրայ մի առանձին ուշագրութիւն չէին դարձրել. Նրանց զիսով անգամ չէր անցնում, թէ կարելի է սերմեր ցանել ու մեծ քանակութեամբ բերք ստանար:

Նախամարդիկ գեռ այն գիտակցութեանը չէին հասել, որ կարողանային վաղաւն ու միւս օրւան համար մտածել: Նրանք ապրում էին միմիայն այս օրւան հոգսերով: Այսօրւան ամէն մի պտուղն ու սերմը նրանց համար չափազանց մեծ արժէք ունին: Նրանք չէին կարող սիրտ անել ձեռքն ընկած այսօրւան պաշարը գետնում թաղել այն յոյսով, թէ մի քանի ամսից յետոյ նոր բերք կը ստանան: Բայց դրանից՝ նրանք չէին կարող իրանց ցանքսի մօա՝ ամիսնից՝ նրանք չէին կարող իրանց ցանքսի մօա՝ ամիսնից՝ նսերով քաղցած նստել ու պահապան դառնար: Իսկ եթէ պահապան չփառնային, ցանքսը կը փչացնէին ամեն կողմ վիստացող կենդանիներն ու թոշունները:

Մարդիկ երկրագործութեամբ սկսել են պարապել այն ժամանակ միայն, երբ ընտանեցրած կենդանիների շնորհիւ, նրանք ուտելու բաւականին առատ թէ միս և թէ կաթ են ունեցել: Այդ ժամանակ

նրանք այլևս չէին վախենում, թէ սովից կը մեռնեն և կարող էին ցանքսի հասնելուն սպասել:

Ամենից առաջ, մարդիկ ցանել են այնպիսի սերմեր, որոնք թէ խոշոր են և թէ կարծ ժամանակում են հասնում: Այդպիսի սերմերից են՝ բոկլան, լոբին, եգիպտացորենը և ուրիշ հացահատիկներ:

Պտղատու ծառեր ցանելու կամ տնկելու մասին մարդիկ սկզբում իսկի չէին էլ մտածում, որովհետև դրանց պտուղները ստանալու համար շատ երկար տարիներ սպասելու էին:



Նկ. 26 և 27. Նախական արօների տեսակները:

Ազգբում նրանք ցանում էին առանց որևէ գործիքի. սերմը հողի մէջ թաղում էին ձեռքերով և բերքն էլ ձեռքերով քաղում: Բայց յետոյ, ցանելու գործին հետզհետէ ընտելանալով, նրանք նկատում են, որ եթէ գետինը լաւ է քանդած ու հողը փափացրած, բոյսերն աւելի լաւ են աճում ու բերքն էլ

առատ է լինում։ Այդ ժամանակից էլ նրանք հնարում են իրանց առաջին արօրը, որը հետզհետէ կտարելագործում են։

Հաց թխելը նոյնպէս մարդիկ մի անգամից շեն սովորել։ Սկզբում նրանք հասած հասկերը քարերով ջարդում, հատիկները ջոկում և այնպէս հում-հում էին ուտում։ Բաւական ժամանակ անցնելուց յետոյ միայն, նրանք սովորել են հացահատիկներն աղալ և ալիւր դարձնել Աղում էին՝ երկու քարի միջև ջարդելով, սանդի մէջ ծեծելով և երկանքի միջոցով։ Այդ ձևով աղած ալիւրը նրանք խառնում էին ջրի հետ, շփոթ էին շինում ու այդ շփոթն ուտում առանց եփելու։

18.

Ն Ս Ա Կ Ե Ա Յ Կ Ե Ա Ն Գ

Երկրագործութեամբ պարապելիս մարդիկ շրունակում էին դեռ թափառական կեանք վարել։ Միաժմանակ նրանք թէ խաշնարածութեամբ և թէ որսորդութեամբ էին պարապում։

Իսկապէս, այս կամ այս զբաղմունք ընտրելը, զլիաւրապէս կախւած էր նրանից, թէ սարուի ինչ պիսի երկրում էին ապրում։

Եթէ նրանք գետերի կամ ծովերի եզերին էին ապրում, աւելի շատ ձկնորսութեամբ էին պարապում։ Իսկ եթէ նրանց ապրած երկիրը շատ աւելի յարմարութիւններ ունէր որսորդութեան, խաշնարածութեան կամ հողագործութեան համար, մարդիկ

այդ զբաղմունքներն էին ընտրում։ Լինում էին այնպիսի երկրներ, ուր կարելի էր այդ զբաղմունքներից թէ մէկը և թէ միւսն ունենալ։

Հենց մեր երկրի շատ տեղերում էլ ժողովարդը միաժմանակ պարապում է թէ հողագործութեամբ և թէ խաշնարածութեամբ։ Ամառայ ամիսներին ընտանիքի մի մասը գնում է խաշների հետ «սարը» թափառելու, իսկ միւս մասը մնում է զիւղում՝ երկրագործական աշխատանքներ կատարելու։

Հետզհետէ երկրագործութեան վարժւելով, նախամարդիկ չեն սկսել միանգամից նուակեաց կեանի վարել ու հիմիկւան պէս գիւղեր ու քաղաքներ շիներ։ Այդ էլ կատարւել է շատ դանդաղ կերպով և երկար տարիների ընթացքում։

Առաջ մարդիկ տարւայ մի որոշ ժամանակ էին միայն կանգ տանում այս ու այն տեղ, որպէսզի սպասեն ցանքսի վերջանալուն։ Բերքերը հաւաքելուց յետոյ, նրանք դարձեալ շարունակում էին իրանց թափառական կեանքը։ Բացի դրանից, միենոյն մարդիկ, ամեն տարի, միենոյն տեղում չէին կատարում իրանց ցանքսը։ Ընդհակառակը՝ նրանք միշտ ման էին գալիս, և ուր որ ազատ ու յարմար տեղ էին գըտնում, այնտեղ էլ ցանում էին։ Ազատ տեղեր էլ խօմ շնտ։ չէ որ մարդիկ հիմիկւան չափ բազմաթիւ չէին։

Երկրագործութեամբ պարապելու գաղափարը առաջին անգամ կնոջ ուղեղութիւն է ծագել։

Կանայք իրանց երեխաներին կերակրելու և մեծացնելու հոգսերով ծանրաբեռնած, անկարող էին տղամարդկանց նման որսորդութեամբ պարապել։ Նրանք ստիպւած էին շատ աւելի բռնեղին ուտե-

լիքներով բաւականանալ: Այդ պատճառով էլ կանայք աւելի շատ միջոց ունեին բոյսերի հետ ծանօթանալու և սերմեր ցանելու փորձեր անելու:

Տղամարդիկ երկար ժամանակ խորշում էին երկրագործութիւնից՝ անվայել գործ համարելով այդ: Նրանք այդ աշխատանքը թողնում էին կանանց, իսկ իրանք որսորդութեամբ էին պարապում:

Մինչեւ այսօր էլ կան ցեղեր, որոնց մէջ երկրագործութիւնը «կանանց գործ» է համարւում:

19.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՅՆԵՐ

Շարունակ երկրէ-երկիր գնալու ստիպւած նախամարդիկ՝ ճանապարհներից բոլորովին զուրկ էին:

Դեռ ոչ միայն այսօրւան երկաթուղիները, խընդուղիներն ու աւտոմոբիլները չկային, այլև մինչեւ անգամ հասարակ ճանապարհներ ու ընտանի անասուններ էլ գոյութիւն չունեին:

Նրանք ստիպւած էին շարունակ ոտքով ման գալ: Իսկ ոտքով շատ հեռու ճանապարհ չէր կարելի գնալ, և եթէ գնում էլ էին, այդ ամիսներ ու տարիներ էր տեսում:

Ոտքով ճանապարհորդելու գժւարութիւններից նախամարդիկ ազատւում են, երբ սովորում են կենդանիներին ընտելացնել: Իսկ հեռու տեղեր ճանապարհորդելը հեշտանում է միայն այն ժամանակ, երբ մարդիկ հնար են գոնում ջրի վրայ նաւարկել:

Գետերի ու ծովերի մօտ ապրող մարդիկ շատ

վազ էին նկատել, որ մի քանի առարկաներ, օրինակ քարը՝ ընկղմւում, ջրի տակն է գնում, իսկ մի քանիսն էլ, ինչպէս փայտը՝ ջրի երեսը մնում ու լողում էին: Յետոյ պատահել է, որ ջրի մէջ ընկած մարդը, խեղգւելուց ազատւելու յուսով, բռնել է մի լողացող գերանից և նկատել, որ ինքն էլ գերանի հետ լողում է ջրի երեսին:




Նկ. 28. Նաւակ

Այդ բանը նկատելուց յետոյ, մարդիկ այլ ևս դիտմամբ էին գետի մէջ գերան գցում և իրանք էլ վրան նստած մի որոշ տեղ գնում:

Լողացող գերանն ուզած տեղը և ուզած ժամանակ գետափին մօտեցնելն էլ մի գժւար բան չէր: Դրա համար գերանի վրայ նստած մարդն իր հետ մի երկար ձող էր վերցնում և նրա ծայրը գետի յատակին հպում:

Մէկ անգամ այդ եղանակով ջրի վրայ ճանապարհորդելու հնարքը գտնելուց յետոյ, մարդիկ այլիս հետզինեաէ կատարելագործում են նրան։ Մի քանի հոգի միասին ճանապարհորդելու նպատակով, մարդիկ



Նկ. 29. Լաստ

մի քանի գերաններ էին իրար կապում։ Եւ այդ եղանակով ստացւել է այն լասր, որ մինչև օրս էլ դեռ գործ է ածւում շատ գետերի վրայ։

Այդպիսով հիմք է դրւում նաև ազնագրւեան։

20.

ԱՌԱԳԱՍՏԱՆԱՒ

Լաստով ճանապարհորդելիս, մարդիկ նկատում են, որ քամի եղած ժամանակ, լաստը քամու ուղղութեամբ աւելի արագ է սլանում։ Այդ հանգամանքը ժարդու մէջ միտք է ծագեցնում առագաւներ շինել

Սկզբում իրրե առագաստ գործ էին ածում հաստ ծառերի կեղեներն ու կենդանիների մորթիները։ Աւելի ուշ մարդիկ սկսել են գործածել զանագան գործածքներ, սկսած ձիլոպից մինչև այսօրւան գործածող ամուր քաթանը։

Լաստն իր քառանկիւնի ձեռվ շատ անյարմար էր զեկավարելու համար, ուստի մարդիկ հետզինեաէ այդ էլ են կատարելագործում։ Նրանք մտածում են վերցնել ծառի հաստ բոյնը, փորել նրան մի կողմից, տաշտի ձեւ տալ ու նրանով ճանապարհորդել։

Բայց ծառի հաստ բոյնը փորելն այնքան էլ հեշտ բան չէր, երբ մարդիկ զեռ քարէ կացիններից զատ, ուրիշ ոչ մի յարմար գործիք չունէին։ Հենց զրա համար էլ մարդիկ մեծ համբերութեամբ մի քանի տարի աշխատում էին, մինչև որ կարողանում էին մի կերպ գլուխ բերել աշշածե մակոյկը։

Կրակ վառելու հնարքը գտնելուց յետոյ, ծառի բոյնը փորելն էլ համեմատաբար հեշտացաւ։ Այս անգամ մարդիկ ծառի բոյնը փորում էին այրելով։ Լաստ գերանի մի կողմի վրայ կրակ էին վառում և գերանը բաւականին այրելուց յետոյ, կրակը հանգցնում էին։ Գերանի այրւած, ածուխ դարձած մասը շատ աւելի հեշտութեամբ էր փորուում։ Այդ գործողութիւնը մի քանի անգամ կրկնելուց յետոյ, ցանկացած մակոյկը կարճ ժոմանակից յետոյ պատրաստ էր լինում։

Մակոյկն ու առագաստանաւը հնարելուց յետոյ, մարդիկ հնարում են նաև թիերը, որոնցով թիավարում են քամու հակառակ ճանապարհորդելու ժամանակ։

Աւելի ուշ մարդիկ ջրի վրայ նաւարկելու մի

ուրիշ միջոց էլ են գտել Անասունների մորթուց Տիկ պատրաստել սովորելուց յետոյ, նրանք փշածուռեցրած տիկերը միմեանց էին կապում, վրաները տախ-



Նկ. 30. Առագաստանաւ.

տակներ դարսում և ջրի երեսը զցում ու թիավարում:

Հին ժամանակներում, հայերն այս եղանակով էին ձանապարհորդում Հայաստանի գետերի վրայ:



Նախապատմական մարդու նիւթական կեանիքը

21.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՄԱԽՄԲԻԵԼ

Նախամարդիկ սկզբում, վայրի գազաններից շատերի նման, բոլորովին առանձին-առանձին էին ապրում: Նրանք ոչ միայն գեռ ևս ցեղեր ու ազգեր չէին կազմում, այլև ընտանիք էլ չունէին: Ամէն մարդ առանձին էր թափառում և աշխատում իր գլուխը պահել:

Սակայն կարիքն ու կեանքի պայմանները շուտով ստիպում են նրանց հետզնետէ համախմբւելու և խմբերով ապրելու: Մարդիկ տեսնում էին, որ կան շատ այնպիսի գործեր, որ միայնակ մարդու համար դժւար է կատարելը, այնինչ ընկերովի ամէն գործ հեշտանում է: Ընկերովի աւելի հեշտ է գազաններից պաշտպանելը, ընկերովի նոյնպէս հեշտ է խոշոր կենդանիներ որսալը:

Սկզբում մարդիկ մի քանի հոգով միանում էին միմիայն մի որևէ դժւար աշխատանք կատարելու դէպքում: օրինակ՝ մի գազան սպանելու, կամ նաւակ փորելու համար: Իսկ երբ դժւար աշխատանքը վեր-

ջանում էր, նրանք դարձեալ ցըւում էին և ամէն մէկը մի կողմ էր գնում: Սակայն միասին աշխատելու կարիքն աւելի ու աւելի յաճախ կրկնելով, մարդիկ սովորում են խմբերով ապրել: Այդ խմբերը այլևս մի-մի մեծ ու փոքր թիւանիք կամ ցեղ են կազմում:

Ամէն մի ընտանիք կամ ցեղ իր գլխաւորն ունէր, որ ցեղի ամենածեր անգամն էր: Այդ գլխաւորը համարւում էր ցեղի նահապեսը: Դրա անունով էր կոչւում ամբողջ ցեղը: Այսպէս օրինակ՝ ասում էին Դաւթի ցեղը, Հայկի որդիքը, Թորգոմի զաւակները և այլն:

Նահապետին ցեղի բոլոր անդամները լսում ու հնագանդում էին: Նրա կարգադրութեամբ էին կատարւում բոլոր աշխատանքները, նրա առաջնորդութեամբ էր ցեղը պատերազմի գնում մի ուրիշ թշնամի ցեղի դէմ:

22.

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

I

ՀԱՅԿ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՍԵՆԱԱՐԻ ԴԱՇՏԻՑ

Հայերն էլ շատ հին ժամանակներում ունեցել են իրանց նահապետները:

Ամենաառաջին նահապետը եղել է Հայկը, որի անունով էլ իր ցեղը կոչւել է Հայ:

Հայկն ու իր ցեղը սկզբում նոյնպէս թափառական կեանք էին վարում, ինչպէս ուրիշ շատ ցեղեր:

Նրանք տարւայ մեծ մասը անց էին կացնում Եփրատ ու Տիգրիս երկու մեծ գետերի միջև գտնւող ընդարձակ ու բարեբեր գաշտավայրում:

Այդ երկիրը կոչւում է Միջագետք, որի հարաւային կողմերումն է գտնւում Սենաարի դաշտը, ուր շինւել է աշխարհին ամենահին ու հոչակաւոր քաղաքներից մէկը՝ Բաբելոնիք:

Աենաարի ընդարձակ գաշտավայրում, բացի Հայկի ցեղից՝ կողք-կողքի ապրում էին նաև բաղմաթիւ ուրիշ ցեղեր:

Այդ ցեղերից մէկի նահապետը, Բէլ անունով, մի յայտնի քաջ, կուարար ու ճարպիկ որսորդ էր: Նրան մինչև անգամ Սոստոյ տեղ էին պաշտում: Շատ ցեղեր նրանից վախելով հնագանդւել էին իրան Բոլոր ցեղերին հնագանդեցնելուց և իր ծառաները գարնելուց յետոյ, գոռոզացած Բէլը փորձում է Հայկի ցեղն էլ իրան խոնարհ ծառայ դարձնել: Բայց Հայկն ու իր մարզիկը, որոնց թիւը հասնում էր մօտ երեք հարիւր հոգու, չուզեցին նրա սարուկը դառնալ և Սենաարի գաշտը թողին հեռացան:

Նրանք գնացին դէպի հիւսիսային կողմերը՝ Արարատ կոչւած աշխարհը:

Անցնելով Տիգրիս գետի եզերքով, ճանապարհին նրանք տեղ-տեղ կանգ էին առնում, ուտելիք ճարիւրու, կամ թշնամի ցեղերի դէմ կուելու համար:

Երկար ճանապարհորդելուց յետոյ, Հայկն իր մարդ-

կանցով վերջապէս համառում է Տիգրիս գետի վերին
ափերին ու կանգ առնում բարձր լեռների ստորոտին:

Այդտեղ առաջուց զանազան ցեղեր էին ապրում:
Նրանք սակաւաթիւ լինելով, վախենում են Հայկից և
նրան հպատակում:

Այդ նոր երկիրը Հայկը յանձնում է իր կարմու
թոռանը կառավարելու, իսկ ինքը, իր ցեղի մի մասը
հետն առնելով, աւելի հեռու է գնում: Նա անցնելով
բարձր-բարձր սարերից, կանաչ ու ծաղկաւէտ հո-
վիտներից, խոր-խոր ձորերից և մեծ ու պստիկ գե-
տակներից, հասնում է Աղի ծովի հիւսիսային արե-
մտեան կողմը: Այստեղ, նա մի ջրառատ ու հովա-
սուն լեռնադաշտի վրայ բնակութիւն է հաստատում:

Հայկի բնակած այս նոր տեղն էլ ամայի չէր.
այնտեղ էլ շատ ճնուց ապրում էին ուրիշ բազմաթիւ
մանր-մունր ցեղեր, որոնք նոյնպէս թափառական
կեանք էին վարում:

Ժամանակի ընթացքում, Հայկն այդ ցեղերին
մտսամբ քաղցրութեամբ և մեծ մտսամբ էլ բռնի ու-
ժով հպատակեցնում է իրան:

Այդ նոր երկրում, Հայկն ու իր մարդիկը սկսում
են հետզետէ երկրագործութեամբ պարապել: Միջա-
գետքում երկար ժամանակ ճանապարհորդելիս, նրանք
տեսել ու սովորել էին այդ կողմի ժողովուրդներից
հողագործութեամբ պարապելու եղանակը:

Հայկը մի զիւղ է շինել տալիս, որն իր անու-
նով կոչւում է Հայկաւն: Երկար առըիների ընթաց-
քում այս կողմերում շատ մեծ ու փոքր ուրիշ գիւ-
ղեր են շինւում, որոնք բոլորը միասին կոչւում են
Հայկը կաւառ, որ նշանակում է Հայկի բնակած տեղ:

II

ՀԱՅԿԻ ԵՒ ԲԵԼԻ ԿՌԻՒԲ

Երբ Բէլն իմանում է, որ Հայկը չուզենալով ի-
րան հնազանդւել, իր մարդկանցով փախել գնացել է
հեռու աշխարհ, սաստիկ բարկանում է: Նա հրամա-
յում է իր օգնականներին՝ հաւաքել բոլոր իրանց
քաջ զինակիրներին, զինել նրանց ընտիր զէնքներով և
ամուր զրահներով ու գնալ Հայկի ետևից:

Սենաարի դաշտի բոլոր ցեղերը իրար էին ան-
ցել. բոլոր ցեղապետները միծամեծ պատրաստու-
թիւններ էին տեսնում:

Քանի օրերն անցնում էին, այնքան Բէլը յուզ-
ուում ու կատաղում էր:

Վերջապէս բաւական երկար օրերից յետոյ, բո-
լոր մանր ցեղապետները իրանց բազմաթիւ զինա-
կիրներով, մեծ պաշարով եկան հաւաքւեցին մեծ ցե-
ղապետի՝ հսկայ Բէլի շուրջը:

Այդ խառնիմաղանձ բազմութեան գլուխն անցած,
բանակալը ճանապարհ է ենում և շտապով Հայկին
հետեւում:

Հենց որ Բէլը Միջագետքի սարերից անցել, կոր-
դւաց լեռներն էր բարձրացել և ոտք դրել Կաղմոսին
յանձնւած երկիրը, վերջինս իսկոյն լուր է հասցնում
Հայկին, թէ Բէլը դալիս է:

Անվախ ու ազատասէր հայոց նահապետը, ա-
ռանց շփոթւելու, իր սակաւաթիւ, բայց կուի վարժ
մարդկանցով՝ դուրս է զալիս Բէլին ընդառաջ: Նա
զնում համառում է Աղի ծովի հարաւային արկելեան կող-
շարք կաւառ, որ նշանակում է Հայկի բնակած տեղ:

մերը, ու այդտեղ մի գաշտավայրում բանակ է դնում:

Հազիւ թէ հանգստացել էին Հայկն ու իր կըտրիձները, ահա սարի լանջին երեռւմ է երկարահասակ և յաղթանդամ Բէլը, մի խումբ զինակիրների հետ:

Հեռւից շատ գեղեցիկ նկատում էին նրա գլխին բրոնզէ սաղաւարը, կրծքի և թիկունքի գրահները ու մէջքի փայլուն գօտին: Նա մի ձեռքին բռնել էր նիզակ, միւսում բրոնզէ վահան, ուսից կախ էր գցել աղեղ, իսկ մէջքիցն էլ կախել էր սուր:

Բէլի գէմ գուրս եկող հայոց ալեզարդ նահապեան էլ էր զինւել ու զարդարւել, բայց ոչ այնպէս շքեղ և հարուստ, ինչպէս իր թշնամին: Նրա ամբողջ զարդարանքն ու զէնքը իր գեղեցիկ աղեղն ու բազմաթիւ նետերն էին:

Երկու թշնամի բանակները երբ արգէն բաւական իրար են մօտենում, Բէլն իր մարդկանցով փորձում է առաջ գալ և մի յարձակումով կուին վերջ տար:

Հայկն ու իր քաջերը Բէլի մարդկանց գլխին կրակի նման նետեր են թափում և ստիպում ետ նահանջեր: Հոկայ Բէլն էլ է վախենում: Նա շուռ է գալիս որ գնայ իր մայր բանակի գլուխն անցնի և ապա յարձակում գործի:

Իր կեանքը կոիւների մէջ անցկացրած հայոց փորձած նահապետը, իսկոյն զլիի է ընկնում, թէ ինչ էր ուզում անել Բէլը, ուստի առանց ժամանակ կորցնելու, չոքում է գետնին, ճարպկութեամբ քաշում է աղեշչոքում է գետնին, ճարպկութեամբ քաշում է աղեշչոքում է գետնին:

Սլանում է երեք-զլիանի նետը, զարկում է նըսկայի կրծքին, չարգում նրա բրոնզէ տախտակները և խրւում սիրտը:

Անոելի մոնշիւնով զլորւում է ամբարտաւան ու զոռոզ բռնակալը:

Բէլի մարդկեր, երբ տեսնում են իրանց պաշտած հակային ու աստծուն գետին զլորւած, սարսափահար են լինում ու փախչում դէս ու դէն:

Պատերազմի գաշտում նրանք թողնում են բազմաթիւ ձիեր, ջորիներ, զէնքեր, զրահներ և իրանց ընկերների գիտակները...

Հայկն այդ հարստութեան մի մասը բաժանում է իր քաջարի կուողներին, իսկ մի մեծ մասն էլ ինքն ու իր զաւակներն ու թոռներն են վեր առնում և տանում իրանց հետ Հայկաշէն:

Այս յաղթութեան յիշատակն իր ցեղի մէջ վառ պահելու համար, Հայկը կուի տեղում մի զիւղ է շինել տալիս ու նրան անւանում է Հայք: Երկար ժամանակ անցնելուց յետոյ, ամբողջ գաւառը կոչւում է Հայոց Չոր, իսկ Բէլի ընկած տեղը՝ Գերեզմանիք:

Այս բոլոր գործերը կարգադրելուց յետոյ, Հայկը վերագանում է Հարք գաւառը, տանելով իր հետ նաև Բէլի մարմինը, որ թաղել է տալիս մի բարձր լեռան վրայ, որպէսզի թոռներն ու ծոռները զրա գերեզմանը տեսնելիս՝ յիշեն իրանց նախահօր քաջութիւնը:

Դրանից յետոյ, Հայկը գեռ էլի բաւական երկար տարիներ է ապրում և ապա մեռնում խոր ծերութեան մէջ, մեծ ցաւ պատճառելով թէ իր զաւակներին ու թոռներին և թէ բոլոր իր ցեղի մարդկանց:

23.

ԱԶԱՏՆԵՐ ԵՒ ՍՏՐՈՒԿՆԵՐ

Մարգկային զանազան ցեղերը միշտ թշնամի էին իրարու, միշտ աշխատում էին միմեանց բնաջինջ աներ՝ նրանք իրար պատահած ժամանակ, միմեանց որսում էին ճիշտ այնպէս, ինչպէս որ որսում էին կենդանիներին:

Մարդիկ սպանում, ոչնչացնում էին իրար ոչ թէ հէնց այնպէս, իրանց գւարձութեան համար, այլ որպէսզի իրանք ապրուստի կողմից աւելի սպահով լինեն: Նրանք միշտ վախենում էին, թէ բնութեան մէջ եղած ուտելիքները չեն կարող բոլոր մարդկանց բաւականացներ: Դրա համար հարկաւոր էր, ուրեմն, միմանց ոչնչացներ, որ իրանց աւելի շատ բաժին մնար, եանց ոչնչացներ, որ իրանց աւելի շատ բաժին մնար:

Սովից մեռնելու վախից ստիպւած, մեր նախապերը մինչև իսկ ուտում էին իրանց սպանած պարդկանց: Ուտում էին նոյնպէս և ողջ բոնած գերիներին, որպէսզի իզուր չկերակրեն նրանց:

Այն ժոմանակ, երբ մարդիկ սովորեցին կենդանիներին ընտանեցնել և խաշնարածութեամբ ու երկրագործութեամբ պարապել նրանք հետզետէ թողեցին գերիներին ուտելու սովորութիւնը:

Բռնած գերիներին, ուտելու փոխարէն, նրանք աշխատեցնում էին ճիշտ այնպէս, ինչպէս իրանց լնաւանի անասուններին: Գերիներն էին պահում-պահանում խաշները, հերկում-մշակում հողը և կատապահանում անային բոլոր աշխատանքները: Իսկ ՏԵՐԵՐ՝

«աղաները» միմիայն գւարձութիւններով կամ պատերազմներով էին զբաղւում:

Այդպիսով ամէն մի ցեղի մէջ եղած մարդիկ հետզետէ բաժանւեցին երկու տեսակի: տէրերը, որ ոչ մի գմւար աշխատանք չէին անում և կոչւում էին սպասիեր, և զերիները, որոնց պարականութիւնն էր բոլոր աշխատանքները կատարել: Վերջինները կոչւում էին սրուկիներ:

Սարուկները մարդու հաշւում չէին, նրանք իրաւունք չունեին ոչ զէնք կրելու, ոչ պատերազմի զընալու և ոչ էլ մի որ և է իշխանութիւն ունենալու: Ազատները կարող էին նրանց ծեծել, բանարկել տանչել և մինչեւ իսկ սպանել առանց մի որոշ պատիժ կրելու: Սարուկներին մինչև իսկ ծախում էին, իբրև աշխատող կենդանիների:

24.

ԻՇԽԱՆԱԿՈՐՆԵՐ

Միշտ ցեղի նահապետը չէր, որ ցեղին առաջնորդում էր պատերազմների: Պատահում էր, որ նահապետի ծերութեան կամ տկարութեան և կամ մի այլ պատճառով, ցեղն իր համար մի ուրիշ առաջնորդ էր ընտրում: Սովորաբար ընտրում էին այնպիսի մէկին, որը ցեղի մէջ աչքի էր ընկնում թէ իր քաջութեամբ ու անվեհերութեամբ և թէ իր խելքով ու փորձառութեամբ: Ամբողջ ցեղի կողմից ընտրւած այդ առաջնորդը՝ համարւում էր ցեղի օրապետը կամ ցեղապետը:

23.

ԱԶԱՏՆԵՐ ԵՒ ԱՏՐՈՒԿՆԵՐ

Մարդկային գտնազան ցեղերը միշտ թշնամի էին իրարու, միշտ աշխատում էին միմեանց բնաջինջ անել: Նրանք իրար պատահած ժամանակ, միմեանց որսում էին ճիշտ այնպէս, ինչպէս որ որսում էին կենդանիներին:

Մարդիկ սպանում, ոչնչացնում էին իրար ոչ թէ հէնց այնպէս, իրանց գւարձութեան համար, այլ որպէսզի իրանք ապրուսափ կողմից աւելի ապահով լինեն: Նրանք միշտ վախենում էին, թէ բնութեան մէջ եղած ուտելիքները չեն կարող բոլոր մարդկանց բաւականացներ Դրա համար հարկաւոր էր, ուրեմն, միմեանց ոչնչացնել, որ իրանց աւելի շատ բաժին մնար:

Սովից մեռնելու վախից սախալած, մեր նախապատերը մինչև իսկ ուտում էին իրանց սպանած մարդկանց: Ուտում էին նոյնպէս և ողջ բոնած զերիներին, որպէսզի իզուր չկերակրեն նրանց:

Այն ժամանակ, եթե մարդիկ սովորեցին կենդանիներին ընտանեցնել և խաշնարածութեամբ ու երկարործութեամբ պարապել նրանք հետպհետէ թղթեցին գերիներին ուտելու սովորութիւնը:

Բահած զերիներին, ուտելու փոխարէն, նրանք աշխատեցնում էին ճիշտ այնպէս, ինչպէս իրանց ընտանի անասուններին: Գերիներն էին պահում-պահանում խաշները, հերկում-մշակում հողը և կատապահում անային բոլոր աշխատանքները, իսկ Տէրերը

«աղաները» միմիայն գւարձութիւններով կամ պատերազմներով էին զբաղւում:

Այդպիսով ամէն մի ցեղի մէջ եղած մարդիկ հետպհետէ բաժանեցին երկու տեսակի: տէրերը, որ ոչ մի գժւար աշխատանք չէին անում և կոչւում էին ազատներ, և գերիները, որոնց պարտականութիւնն էր բոլոր աշխատանքները կատարել: Վերջինները կոչում էին ԱՏՐՈՒԿՆԵՐԻՆ:

Ստրուկները մարդու հաշւում չէին նրանք իրաւունք չունէին ոչ զէնք կրելու, ոչ պատերազմի զընալու և ոչ էլ մի որ և է իշխանութիւն ունենալու: Ազատները կարող էին նրանց ծեծել բանտարկել, տանջել և մինչև իսկ սպանել, առանց մի որոշ պատիժ կրելու: Ստրուկներին մինչև իսկ ծախում էին, իբրև աշխատող կենդանիների:

24.

ԻՇԽԱՆԱԿՈՐՆԵՐ

Միշտ ցեղի նահապեաը չէր, որ ցեղին առաջնորդում էր պատերազմների: Պատահում էր, որ նաև հապետի ծերութեան կամ ակարութեան և կամ մի այլ պատճառով, ցեղն իր համար մի ուրիշ առաջնորդ այդ պատճառով: Սովորաբար ընտրում էին այնպիսի մէկին ընտրում: Մայրութեամբ էին առաջնորդ մի կին, որը ցեղի մէջ աչքի էր ընկնում թէ իր քաջութեամբ ու անվեներութեամբ և թէ իր խելքով ու փորձառութեամբ: Ամբողջ ցեղի կողմից ընտրած այդ առաջնորդը՝ համարւում էր ցեղի գօրապետը կամ ցեղապետը:

Զօրապետը ոչ միայն պատերազմների էր առաջնորդում ցեղին, այլ և խաղաղ ժամանակն էլ ցեղի դատաւորն էր հանդիսանում: Ցեղի անդամների միջն պատահած վէճերի և կոփւների համար զօրապետին էին դիմում և նրանից գատաստան ու արդարութիւն խնդրում:

Սակայն շատ էլ հեշտ բան չէր մէկ մարդու համար մի քանի պաշտօններ վարել: Մանաւանդ որ, գնալով, ցեղը աւելի ու աւելի բազմամարդ էր գառնում և գործերն էլ շատանում էին: Այդ գէպքում ցեղապետն իր համար օգնականներ էր ընտրում ու նրանցից ամէն մէկին մի առանձին պաշտօն յանձնում:

Ցեղապետն ու իր օգնականները իրանց կատարած ծառայութիւնների համար, վարձատրում էին նրանով, որ պատերազմներում ձեռք բերւած աւարի մեծ մասը նրանց էր տրում: Այդպիսով, ժամանակի ընթացքում, նրանք սաստիկ հարստանում, բազմաթիւ նոր ու նոր իրաւունքներ են ձեռք բերում: և դառնում են ցեղի իշխանաւորները կամ իշխանները: Ցեղն էր հետզհետէ բազմանալով, զառնում է ազգ Ամենից շատ հարստութիւն և ամենից աւելի իրաւունքներ ձեռք բերած իշխանը կոչում է քաջալոր:

Թագաւորներն ու իշխանները հետզհետէ աւելի ու աւելի ճոխ ու փարթամ կեանք են վարում: Պատերազմներից ստացւած աւարն այլևս բաւարութիւն չի աւալիս օրէցօր աճող պէտքերին: Մեծաքանակ ծախքերը լրացնելու համար, նրանք իրանց հպատակ ժողովուրդի վրայ տուի կամ հարկ են գնում:

ամէն մի մարդ պարտաւորում է իր տարւայ եկամուտներից մի որոշ մասը թագաւորին կամ իշխանին տալ:

25.

Ա Ր Ա Մ

(Իշխան)

I

Հայկ նահապետի մեռնելուց յետոյ, նրա որդիքն ու թոռները հետզհետէ ցրւում են աւելի ու աւելի հեռաւոր տեղեր:

Դրանցից ոմանք գնում են գէպի հիւսիս, ոմանք արևմուտք, իսկ մեծ մասամբ՝ գէպի հիւսիս արևելքը վերջիններից շատ-շատերը տեղաւորում են Երասխ գետի ափին, ուր ժամանակի ընթացքում շինում են բազմաթիւ գիւղեր ու քաղաքներ:

Հայստանի ամենահին քաղաքն էլ շինւել է երասխ գետի ափին և կոչւել է Արմաւիր:

Զանազան կողմեր ցրւած հայերը, միմեանցից բոլորովին անջատ էին ապրում, և զբա համար էլ սաստիկ անզօր էին: Այդ բանից օգուտ քաղելով, չարեան ազգերը նրանց խիստ նեղում էին և շարունակ յարձակութեր էին գործում նրանց վրայ:

Այդ ժամանակներում Հայստանի հարեաններն էին՝ արևելքից Մարաստանը, հարաւից հզօր Ասորեստանը, իսկ արևմուտքից կապագովիկան:

Հայստանի բնակիչներն անկարող լինելով այդ

մեծ ազգերին դէմ դնել, ծանր տուրքեր էին տալիս
նրանց և մի կերպ իրանց գլուխը պահում:

Յրւած հայերը սակայն չկարողանալով երկար
ժամանակ այդ սարկական վիճակը տանել, ջանքեր
են գործ դնում հետզհետէ իրար միանալու և ընդհա-
նուր ոյժով դիմադրելու զօրաւոր թշնամիներին:

Այդ խառնաշվոթ ժամանակներում, բոլոր ցեղա-
պետների մէջ, ամենից աւելի ուժեղն ու սիրո սծը-
երիտասարդ ու կտրիճ Արամն էր, որը կարճ միջո-
ցում կարողանում է Հայաստանի բոլոր ցեղերն իր
իշխանութեան տակ առնել և դառնալ զիխաւոր ցե-
ղապես:

Բոլոր ցեղապետները խոստացել էին կանոնա-
ւոր կերպով օգնել Արամին, տալով նրան թէ կուղ-
ներ և թէ պատերազմի համար անհրաժեշտ ամէն
զինչ ձի, կով, ոչխար, նոյնպէս ցորեն, գարի և զա-
նազան տեսակի զէնքեր:

Այդպիսի մեծ իրաւունքներ ձեռք բերելուց յե-
տոյ, Արամն ամենից առաջ վճռում է Հայաստանն ա-
զատել Մարտասանի լծից:

Նա հաւաքում է բազմաթիւ զօրք, զինում է
նրանց նետ աղեղով, թրով ու սրով և յարձակում
մարտց Նիւքար Մաղես իշխանի վրայ:

Կտրիճ Արամը ջարդում է նրա բանակը և ի-
րան էլ գերի վերցնելով, բերում է Արմաւիր, ու պատ-
ժում, նրա երկրի վրայ նա տուրք է նշանակում:

Արեւելքի թշնամուց ազատւելուց յետոյ, Արամն
արշաւում է զէպի հարաւ, ասորոց Բարսում իշխանի
դէմ, որը շարունակ ասպատակում ու կողոպտում էր
հայոց աշխարհը:

Թշնամի բանակներն իրար հանդիպելով, երկու
կողմի հսկաները զարհուրելի կերպով միմեանց են
զարկում: Թւում էր թէ ոչ մէկ կողմը տեղի չէր
տալու, բայց Արամի քաջ զինակիցները մի վերջին
կատաղի յարձակումով ցիրուցան են անում Բարշամի
կատաղի յարձակումով ցիրուցան են անում Բարշամի
զօրքը և իրան էլ փախցնում կորպւաց լեռների այն
կողմը՝ հեռու Ասորեստանի դաշտերը, ուր և սպան-
ում է:

Արամը մեծ հարստութեան հետ աէր է դառ-
նում նաև Բարշամի բոլոր երկրներին ու նրանց ըլ-
նակիչներին ստիպում է տուրք տալ իրան:

II

Այդ փառաւոր յազթութիւնից յետոյ, Արամն, իր
բանակն էլ աւելի ուժեղացնելով յարձակում է զէ-
պի արհմուտք, կապագովկիայի Պայապիս Քաղեայ
պի վրայ, որն այդ կողմերում սարսափ էր տա-
իշխանի վրայ, որն այդ կողմերում սարսափ էր տա-
րածել:

Այս վերջին թշնամին էլ երկար չգիմանալով հա-
յոց բազերին, փախչում զնում է հեռաւոր երկրներ:
Պայապիսի ընդարձակ երկրները միացնելով իր
երկրի հետ, Արամը նրանց վրայ կառավարիչ է նր-
անակում իր ազգական Մշակին ու նրամայում, որ
ինչպէս ուրիշ հաղատակ ժողովուրդները, նոյնպէս և
կապագովկիացիք՝ հայերէն խօսեն:

Մշակն իր բնակութեան համար կապագովկիա-
յում մի քաղաք է շինել տալիս և անւանում Մշակ:
Տեղացիները չկարողանալով այդ անունը հայերէն
ուղիղ հնչել ասում էին «Մաժակ»:

Այդ քաղաքը հիմի էլ կայ, բայց անունը փոխած է և կոչւում է Կեսարիա:

Այսպէս՝ երբ Արամը Հայաստանի բոլոր սահմանները թշնամիներից մաքրում է, նրա չորս կողմերի հսկողութիւնը յանձնում է սահմաններին մօտ բնակւող ցեղապետներին, որ հսկեն ու պաշտպանեն:

Դրանից յետոյ նա ինքն իրան նւիրում է իր երկրի զարգացմանն ու ժողովրդի հանգստութեանը: Այլ և այլ կողմերից բազմաթիւ մարդիկ բերել է տալիս նա և բնակեցնում իր նոր գրաւած արևմտեան երկրներում: Այդ երկրները սկզբում կոչւեցին Առաջին Հայք, յետոյ զանազան մասերն անւանեցին Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք:

Պատմում են, որ Արամի այս յաջողութիւններին չափազանց նախանձում էր Ասորեստանի և Բաբելոնաստանի Նինոս թագաւորը, որը բռնակալ Բէլի թոռներից մէկն էր համարւում:

Այս Նինոսը շատ վատ բաներ էր մտածում Արամի մասին և առիթ էր փնտում իր վրէժը լուծելու: Հակառակ Նինոսի ցանկութեան, Արամը քանի զնում այնքան աւելի յաջողութիւններ էր ունենում և ուժեղանում էր: Այդ հանգամանքը Նինոսին ստիպում է Արամին բարեկամ ձեանալ: Նա, որպէս թագաւոր, զեսպաններ է ուղարկում Արամի մօտ, չնորհաւում նրա քաջագործութիւնները և իրաւունք է տալիս նրան արձակ-համարձակ վարել իր իշխանութիւնը: Բացի այդ, Նինոսը Արամին իրանից յետոյ երկրորդ մեծ իշխանն է ճանաչում և թոյլ է տալիս կապել գլխին իր ուղարկած մարդարտէ վարակալը:

Այդ բոլորից յետոյ Արամն իր իշխանութեան մայրաքաղաք է գարձնում Արմաւիրը, որն էլ բարձր աշտարակաւոր պարիսպներով պատել է տալիս:

Արամի վարած պատերազմների շնորհիւ, հայերը յարաբերութեան մէջ են մտնում դրացի այլեալ ազգերի հետ և նրանցից շատ ու շատ նոր բաներ սովորում:

Այսպէս օրինակ՝ Հայաստանում զարգանում են խաշնարածութեան և երկրագործութեան հետ նաև արհեստներն ու առեստուբը:

Ասում են, որ օտար ազգերը Արամի անունով է, որ հայերին արմ էն, և Հայաստանն Արմենիա են անւանում:

26.

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿՆ ՈՒ ՇԱՄԻՐԱՎԸ

I

Արամի մահից յետոյ, հայոց իշխան է դառնում իր որդին Արան, որն իր զարմանալի գեղեցկութեան պատճառով կոչւել է Արա զեղեցիկ:

Արայի իշխանութեան օրով էլ Նինոս թագաւորը չի համարձակւում Հայաստան ոտք կոխել այլ ընդհակառակ՝ Արայի հետ էլ է բարեկամ մնում և նրան էլ ճանաչում է մեծ իշխան:

Նինոսի մահից յետոյ, Ասորեստանի գանն է բարձրանում նրա կինը՝ նամիքան. որ մի շատ պատերազմասէր թագուհի էր:

Նա Մարաստանին ու Պարսկաստանին տէր դառնալուց յետոյ, աչք է առնկում նաև Հայոց աշխարհի վրայ:

Ասում են, թէ Շամիրամը վաղճեց, գեռ Նինոսի կենդանութեան ժամանակ, զանազան թափառական աշխազներից (Երգիչ) լսած լինելով Արայի գեղեցկութեան մասին, սիրահարւել էր նրա վրայ: Իսկ ամուսնու մահից յետոյ, երբ նա բազմաթիւ երկրների տէր է դառնում, որոշում է Արայի հետ ամուսնալու:

Նա թանկագին ընծաներով դեսպաններ է ուղարկում Արայի մօտ, որ առաջարկեն նրան ամուսնալ իր հետ ու այդպիսով դառնալ միաժամանակ թէ Ասորեստանի, թէ Մարաստանի և թէ Հայաստանի թագաւոր:

Շամիրամը մեծ յոյս ունէր, որ Արան կընդունէր իր այդ փայլուն առաջարկը, բայց սիալւել էր: Արա գեղեցիկը սաստիկ սիրում էր իր նազելի նւարդ կնոջը, ուստի և կտրուկ կերպով մերժում է Շամիրամին:

(Հպարտ ու գոռող) Շամիրամը Արայի մերժումը լսելով, բարկութիւնից կատաղում է: Նա վճռում է զէնքի ոյժով կատարել իր ցանկութիւնը:

Նա իր ընդարձակ երկրներից բազմաթիւ զօրք է հաւաքում և յարձակում Հայաստանի վրայ:

Շամիրամի ահեղ բանակը մեծ դժւարութիւններով հասնում է, վերջապէս, Արարատիան դաշտը, որ երասխ գետի հիւսիսային կողմումն է:

Այդտեղ է գալիս նաև Արա գեղեցիկն իր սահաւթիւ զօրքերով:

Պատերազմի սկզբին Շամիրամը խստիւ պատւիրում է իր զօրքերին չսպանել Արային, այլ կենդանի բոնել նրան ու բերել իր մօտ:

Սակայն, հակառակ Շամիրամի այդ կարգադրութեանը, նրա զինւորները, կուի ամենատաք միջոցին, չճանաչելով, սպանում են Արային:

(Աւանդութիւնն ասում է, որ) պատերազմից յետոյ, Արայի սպանելն իմանալով, Շամիրամն սաստիկ յուզւում ու ցաւում է: Նա հրամայում է մեռների մէջ որոնել Արայի գիակը, և գտնելուց յետոյ, մեծ սուզ է անում նրա վրայ և թաղել է տալիս մի բարձր տեղ:

Հայերը, երբ իմանում են իրանց սիրելի իշխանի մահը, սաստիկ գրգռուում են և ուզում շարունակել պատերազմը: Բայց Շամիրամը նրանց հանգըստացնելու համար յայտարարում է, թէ Ասւածները կենդանացրել են Արային, և ապրում է իր մօտ, պալատում:

Արայի մահով Շամիրամը տէր է դառնում Հայաստանին: Նա Այրարատեան գաշտից գնում է Բըզնունեաց (Ազի ծով) ծովի արեելեան ափը և այնտեղ համար մի ամառանոց է շինել տալիս: Այդ ամառանոցը նրա անունով կոչում է Շամիրամակեր, բայց այժմ՝ Վան (Շամիրամն իր այդ ամառանոցը շինելու համար, բոլոր գլխաւոր վարպետները բերել է տալիս Ասորեստանից, որովհետև տեղացիները զեռ հմուտ չէին լաւ պալատներ և այլ շէնքեր կառուցանելու մէջ. նրանք մեծ մասամբ հասարակ աշխատանքներ էին կատարում:)

Շամիրամն այդտեղ շինել է տալիս բազմաթիւ

և սիրուն այգիներ, պարտէզներ ու ծաղկանոցներ, որոնց համար ջուրը բերել է, տալիս բաւական հեռափեց և անցկացնում քաղաքի զանազան մասերով:

Հոչակաւոր էին Շամիրամակերտի պալատներն ու բաղանիքները, ինչպէս և ապառաժների մէջ փորել տւած այլեայլ մեծութեան սենեակները, զանձարաններն ու անցքերը:

Մինչև այսօր էլ վանում սեպանեւ տառերով հրակայական ժայռերի վրայ պրւած արձանագրութիւններ կան, որոնց մասին աւանդութիւնն ասում է, թէ Շամիրամն է փորագրել տւել:

27.

ՏԻԳՐԱՆ ԵՐԻԱՆԴԵԱՆ

(Թագաւոր)

I

Արա գեղեցիկի մահով հայերն իրանց ազատութիւնը կորցնում են և զառնում հարկատու ասորեստանցոց:

Անցնում են բաւական երկար տարիներ, և ասորեստանցիք քանի գնում թուլանում ու տկարանում են:

Այդ բանից օգտւելով, Ասորեստանի հարկատու շատ ազգեր, որոնց մէջ նաև հայերը, հրաժարւում են հարկ վճարել և, մինչև անգամ, ասորեստանցիներին իրանց երկրներից դուրս քշելով, անկախ թագաւորութիւն են կազմում:

Հայերի թագաւորութիւնն այդ ժամանակից կոչւում է Հայկագանց քագաւորութիւն:

Հայկագանց թագաւորների մէջ ամենից յայտնին ու ամենից աւելի աչքի ընկնողն եղել է Երւանդեան Տիգրանը:

Հնումը հայ «Երգիչները» շատ են ոգեսրւել այս թագաւորով և ամեն լաւ ու գեղեցիկ յատկութիւն որան են վերագրել:

Այդ Երգիչներն այսպէս էին նկարագրում իրանց սիրած թագաւորին. «Տիգրանը յաղթանդամ, զւարթերես ու քաղցրահամբոյր մի մարդ էր, կեր ու խումբ մէջ պարկեցած ու զւարծութիւնների մէջ չափաւոր Բացի գրանից՝ նաև խելօք, ճարտարախօս և վերին աստիճանի արգարագատ էր նա...»:

Տիգրանը յայտնի է եղել գիխաւորապէս նրանով, որ մեծ ուշագրութիւն է դարձրել հայկական զօրքի բարեկարգութեան վրայ:

Մինչև Տիգրանի թագաւոր գառնալը, հայոց զօրքը թէ թւով քիչ էր, թէ վատ զինւած և թէ շատ անվարժ պատերազմներին նա ինչպէս հետիւն, այնպէս էլ հեծելազօրքի թիւն է շատացնում, հին զէնքերի փոխարէն, կատարելագործւած զէնքերով զինուում նրանց և խիստ կարգապահութիւն մացնում զօրքի մէջ:

Այդպէս կարգի բերւած ու զօրեղ բանակի զլութիւն անցած, Տիգրանը մի քանի պատերազմներ է մզում հարեւան թագաւորների դէմ, և յաղթելով նըրանց, մեծ անուն ու հոչակ է ստանում:

Հարեւան թագաւորները, աեսնելով Տիգրանի ոյժն ու զօրութիւնը, սաստիկ նախանձում էին նրան և

65

ամեն կերպ աշխատում էին նրա բարեկամն ու դաշ-
նակիցը լինել: Իսկ ոմանք էլ չարութեամբ ցանկա-
նում էին կործանել նրա թագաւորութիւնը:

II

ՏԻԳՐԱՆՆ ՈՒ ԿԻՒՐՈՍԸ ԴԱՇՆԱԿՑՈՒՄ ԵՆ

Տիգրան երւանդեանի օրով հայերին զբացի ա-
մենասւժեղ և ամենամեծ պետութիւններն էին՝ հա-
րաւալեկելքից Մարաստանը, իսկ արեկելքից Պարս-
կաստանը: Մարաստանում թագաւորում էր նախան-
ձուա Աժդահակը, իսկ Պարսկաստանում Աժդահակի
թոռը՝ երիտասարդ ու կտրիճ Կիւրոսը:

Կիւրոսն իր պապին չափագանց ատում էր և
մինչեւ անգամ մտածում էր խել նրա թագաւորու-
թիւնը:

Իր մատակրութիւնն իրագործելու համար, նա բա-
րեկամանում է և դաժն կապում Տիգրանի հետ:

Այդ գաշնակցութեան մասին իմանալով, Աժդա-
հակը ծանր կասկածների մէջ է ընկնում:

Չափագանց մտածելուց, նա գիշերը մի զարհու-
րելի երազ է տեսնում և հէնց նոյն գիշերն էլ, խոր-
հրդականներին ու գիտնականներին կանչելով, յուղ-
ուած ողառմում է իր երազը:

«Ես, տսում է նա, գտնուում էի Հայաստանում,
որի բարձր ու ձիւնապատ լեռներից մէկի գագաթին
նստած էր մի բարձրահաստակ, խիստ նազերի ու գե-
ղեցիկ կին: Երբ հիացած, ոքանչացած նայում էի

այդ չքնար արարածին, ահա նա ծնում է երեք
կտրիճներ: Սրանցից առաջինն առիւծի վրայ հեծած՝
արևմուտք է թռչում, երկրորդը՝ ընձի վրայ նստած՝
հիւսիս է ոլանում, իսկ երրորդը՝ մի ահաղին վիշապ
սահմածած՝ ուղիղ արշաւում է իմ տէրութեան վրայ:
Այդ ժամանակ ես, իրը թէ գտնուում էի իմ պալատի
տանիքի վրայ, ուր ես և ձեզանից շատերը միասին
աստւածներին զոհ էինք մատուցանում: Յանկարծ
վիշապի վրայ նստողը թռաւ տանիքի վրայ և ու զում
էր աստւածներին ջարդ ու ֆշուր աներ: Ես զայրա-
ցայ ու նետւեցի նրա գէմ: Կատաղի կերպով կուե-
ցինք, առաջ նիզակներով, յետոյ սրերով ու այլ գէն-
քերով... Ես ընկայու...»:

Խորհրդականներից շատերն երազը զանազան կերպ
մեկնելուց յետոյ, համաձայնում են Աժդահակի հետ,
որ յիրաւի, հայոց և պարսից կողմից վտանգ էր
սպառնում մարերի թագաւորութեանը: Դրա առաջն
ասնելու համար, նրանք խորհուրդ են տալիս Աժդա-
հակին՝ զիմել հետեւալ խորամանկութեան:

Աժդահակը թանկագին ընծաների հետ մի սիրա-
լիք նամակ է ուղարկում Տիգրանին և առաջարկում
է նրան բարեկամներ դառնալ, և որպէս զի բարեկա-
մութիւնը մշտական և անկեղծ լինի՝ խնդրում է, որ
Տիգրանն իր քրոջը՝ Տիգրանունուն իրան կնութեան
տայ:

Տիգրանը մտածելով որ այդ ինամիութեամբ
Հայաստանի հարաւային սահմանը մշտապէս ապա-
հովւած կարող է լինել մեծ պատիւներով ու թան-
կագին նւէրներով իր քրոջն ու զարկում է Մարտ-
տան՝ Աժդահակին կնութեան:

Աժդահակը տեսնելով սիրասուն արքայազնուն՝ սաստիկ ուրախանում է և հրամայում ճոխ հարսանեկան հանդէսներ սարքել:

Տիգրանունին կարձ ժամանակի լնթացքում Աժդահակի բոլոր կանանց մէջ ամենից պատւառո՞ն ու ամենից յարգւածն է դառնում և Տիկնանց տիկին է հոչակւում:

III

ՏԻԳՐԱՆԻ ԵՒ ԱԺԴԱՀԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երկար չեն տեսում սակայն, Տիգրանունու տոաչին քաղցր օրերը:

Կասկածոտ Աժդահակը սկսում է պղտորել Տիգրանունու սիրաը, ասելով, որ Տիգրանի կինը, Զարունին՝ շատ է նախանձում Տիգրանունու փառքին և գրգռում է ամուսնուն Մարաստանը նւաճել որպէսզի ինքը մարերի թագունին դառնայ:

Եղբայրասէր Տիգրանունին իսկոյն հասկանում է Աժդահակի չար գիտաւորութիւնը. նա երեսանց ոչ մի գժգոհութիւն չէ ցոյց տալիս, բայց գաղտնի եղբօրը լուր է ուղարկում որ շատ զգոյշ լինի:

Աժդահակը վստահ Տիգրանունու հաւատարմութեան վրայ, պատկամաւորներ է ուղարկում Տիգրանի մօտ և հրաւիրում նրան զալ իր հետ տեսակցելու:

Տիգրանն այս անգամ արդէն սաստիկ զայրացած Աժդահակի վրայ, յետ է գարձնում նրա պատղամաւորներին ու պատերազմի պատրաստուում:

Միենոյն ժամանակ նա լուր է ուղարկում իր դաշնակից կիւրոսին, ասելով, որ շատ լաւ առիթ է Աժդահակի վրայ յարձակւելու:

Հայաստանի զանազան կողմերից բազմաթիւ զօրք հաւաքելով, Տիգրանն արշաւում է Մարաստանի վայ: Գալիս է նոյնպէս քաջ կիւրոսն իր ընտիր զօրքերով:

Պատերազմը դեռ չսկսած, Տիգրանունին փախչում գնում է իր եղբօր մօտ:

Երկու կողմերը սոսկալի կատաղութեամբ յարձակւում են իրար վրայ: Կռւի տաք ժամանակին Տիգրանը սլանում է Աժդահակի վրայ ու նիզակի մի հարւածով տեղն ու տեղը սպանում է նրան:

Աժդահակի բանակի մի մասը կոտորուում, միւսը գերի է բռնւում, իսկ մնացածն էլ ցիր ու ցան փախչում է, թողնելով պատերազմի դաշտում անբաւ հաստութիւն:

Աժդահակի անկումով մարերի թագաւորութիւնը վերջանում է: Կիւրոսն է տիրում Մարաստանի մեծ մասին:

Այս պատերազմում Տիգրանը գերի է վերցնում Աժդահակի կնոջը՝ Անոյշ թագունուն և նրա բազմաթիւ աղջիկներին: Դրանց բոլորին նա բնակեցնում է Մասիս սարի արեկելեան կողմերում:

Այս ազնւականների հետ կային նաև ուրիշ՝ մօտ տասը հազար գերիներ, որոնց նոյնպէս Մասիսի ստորոտումն են բնակեցնում:

Անոյշ թագունու ցեղը, բնակւելով այդ ընդարձակ երկրում և ունենալով իր ձեռքի տակ բազմաթիւ աշխատող սարուկներ, ժամանակի ընթացքում

թէ մեծ հարստութիւն է դիզնւմ և թէ դառնում է Հայաստանի յայտնի ազնւական տոհմերից մէկը:

Գողթան գաւառի երգիչները դրանց վիշապագում են անւանել, այսինքն վիշապների սերունդ, որովհետև Աժդահակ՝ վիշապ է նշանակում:

Այս տոհմը Հայաստանում ճանաչւել է Մուրացան անունով:

Տիգրանը Աժդահակի հետ իր գործերն այսպէս մաքրելուց յետոյ իր շինել տւած Տիգրանակեց քաղաքի ու գաւառի եկամուտը նւիրում է Տիգրանուն, որպէսզի նա էլ բազուհու վայել կեանք վարէ:

Այնուհետև նա, դեռ բաւական տարիներ իր ժողովուրդը խաղաղ ու հանգիստ կառավարելուց յետոյ, մեռնում է, խոր վիշտ պատճառելով հայ ժողովրդին:

28.

ԱՐԵՒՏՈՒՐ ԿԱՄ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նախամարդիկ առևտրի մասին նոյնպէս ոչ մի գաղափար չունէին, որովհետև դեռ ևս ոչ մի աւելորդ ծախելու բան չունէին Նրանք հազիւ էին օրէցօր իրանց գլուխը պահում. ամէն ինչ այնպիսի դժւարութեամբ էր ձեռք բերում, որ ոչ ոք չէր ուզենայ իր ունեցածն ուրիշին տալ կամ ծախել:

Իսկ չունեցած բանը Նրանք, փոխանակ գնելու կամ փոխարէնը մի բան վճարելու, ձեռք էին բերում գողութիւնով կամ աւագակութիւնով: Այդ եղանակով պէտք եղած ձեռք բերելն այն աստիճան սովորական

բան էր, որ մարդիկ պարծենում էին, թէ ով և որ չափ բան է զողացել կամ յափշտակել:

Սակայն, ժամանակի ընթացքում, երբ մարդիկ կարողանում են այնքան ուտելիքներ կամ առարկաներ արտադրել, որ աւելորդ էլ էր մնում, Նրանք ըսկում են այդ աւելորդը միմեանց հետ փոխանակել:

Աւելի հացահատիկներ ունեցող երկրագործը, փոխանակ թողնելու որ իր աւելորդը փշանայ, տալիս էր աւելորդ ձուկ կամ խաշինք ունեցողին և նըրանցից այդ իրերն առնում:

Այդպէս միմեանց հետ փոխանակելով է սկսել մարդկանց միջն առեսուրը, որ տեղի է երկար դարեր, մինչեւ որ մարդիկ փողի կարիք են զգացել:

Փողն էլ առաջ, հիմիկւան պէս, մետաղներից չէին պատրաստում: Իբրև փող մարդիկ գործ էին ածում ընտանի անսառններ, մուշտակներ և կամ ուրիշ այնպիսի իրեր, որոնք ամէն մարդու էլ շատ պէտքական էին, ուստի և կարելի էր դրանց միշտ մի որ և է բանի հետ փոխել կամ նրանցով բան գնել:

29.

ԿՐՕՆԻ ԾԱԳՈՒՄԸ

Նախամարդիկ, ճիշտ փոքրիկ երեխաների նման, բոլորովին անզօր էին բնութեան բազմատեսակ երկոյթները հասկանալու: Նրանք տեսնում էին, օրինակ թէ ինչպէս փայլուն արել դուրս է դալիս առակ, պատօնները, բերելով իր հետ լոյս ու ջերմութիւն,

և ապա, երեկոները գնում թագնուում է հորիզոնի ետեւում. թէ ինչպէս տաք ու պայծառ ցերեկին յաջորդում է մութ ու խաւար գիշերը, և ինչպէս երկնքի վրայ պապում են բազմաթիւ աստղեր։ Նրանք տեսնում էին, թէ ինչպէս այդ աստղերից շատերը, մասնաւոր ամառ ժամանակ, թափում են երկնքից, բայց թէ ուր էին վայր ընկնում՝ նրանք այդ չգիտէին ու չէին էլ կարող հասկանար։

Մարդիկ չէին կարողանում նոյնպէս հասկանար, թէ ինչ բան է լուսինը, որն ամիսը մի անգամ դուրս է գալիս երկնակամարի վրա եղջրի ձեռվ և ապա, հետզհետէ մեծանում, դաթայի ձեւ է ստանում։

Նոյնպէս անբացատրելի էին նախապատմական մարդկանց համար որուար, կայծակը, քամին և այլ շատ բնական երևոյթներ։

Անկարող լինելով հասկանալ բնական երևոյթները, մարդիկ փորձով նկատում էին սակայն, որ այդ երևոյթներից շատերը օգտակար են, իսկ շատերն էլ վնասակար։ Բացի զբանից՝ նրանք նկատում էին, որ միենոյն երևոյթը երբեմն շատ օգտակար, իսկ երբեմն էլ խիստ վնասակար է։ Այսպէս, օրինակ, չափաւոր ու ժամանակին եկած անձրել շատ օգտակար է, իսկ չափից աւելի և անժամանակ եկածը հեղեղատներ է առաջացնում ու մեծ վնասներ տալիս։

Զկարողանալով բացատրել այդ բոլոր երևոյթները, մարդիկ չէին կարողանում և նրանց հասցը վնասների առաջն առնել։ Այդ պատճառով էլ նախամարդիկ սաստիկ վախենում ու սարսափում էին բընութեան ամէն երևոյթներից։ Իսկ վախի ու սարսափի հետևանքն այն է եղել, որ մարդիկ համարեա

թէ ամբողջ բնութիւնը պահանջունի առարկայ են դարձել եւ ամեն մի երեսոյթ մի առանձին աստած համարել։

30.

ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ ԱՍՏԻԱԾՆԵՐ

Մարդիկ ենթադրում էին, թէ բնութեան բոլոր երկոյթներն ու տարրերը բարի ու չար աստւածներ են, որ նրանց մէջ բարի ու չար ոգիներ են բնակւում։

Այդպիսով մարդու համար աստւածներ դարձան և արեգակը, և երկինքը, և լուսինը, և կայծակը, ինչպէս նաև գետը։ Մինչև իսկ վայրի գաղաններն ու բոլոր անասուններն էլ մի-մի աստւածներ եին համարւում։

Բարի աստւածներ էին համարւում այն բոլոր երկոյթներն ու տարրերը, որոնցից մարդն օգուտ էր տեսնում, իսկ չար աստւածները նրանք էին, որոնք վնաս էին հասցնում մարդուն։

Նախապատմական մարդկանց կարծիքով բոլոր շնչաւոր ու անշնչնչ առարկաների մէջ մի-մի ոգի էր բնակւում և զրա համար էլ նրանք բոլորը գիտակցութիւն և հասկացողութիւն ունեն։ Բացի այդ, նրանց կարծիքով, ամէն մի բան աշխարհի վրայ այդ առարկաների մէջ բնակւող ոգիների ցանկութեամբ էր կատարւում։

Եթէ, օրինակի համար, ժայռի գլխից մի քար էր վայր ընկնում ու սպանում մարդուն, մարդիկ

իսկոյն ենթադրում էին, թէ քարը վայր ընկաւ նրա մէջ ապրող ոգու ցանկութեամբ։ Այդպիսով ամէն մի դժբաղդութիւն կամ բաղդասորութիւն բնութեան մէջ ապրող ոգիների կամքիցն էր կախւած։ Եւ քանի որ այդ ոգիները մարդու նման կամք ու հասկացողութիւն ունէին, ուստի ենթադրում էր, որ նրանք կարող էին և խօսք հասկանալ, բան ուտել և զանազան նւէրներ ընդունել։

Այդպէս հաւատալով, մարդիկ սկսում են բարի աստւածներին խնդրել ու աղաչել որ իրանց միշտ պաշտպանեն զանազան չարիքներից։ Իսկ չար աստւածներին էլ խնդրում, աղաչում էին, որ մեղմացնեն իրանց բարկութիւնն ու չարիքներ չհասցնեն։

Ահա այս կերպով է առաջացել աստւածներին աղօթելու գաղափարը։

Բայց աղօթքները շատ անգամ անզօր էին հանդիսանում. միմիայն խնդիրքով և աղաչանքով անկարելի էր լինում դժբաղդութիւնը վերացնել։ Դրա համար էլ մարդիկ աշխատում էին զանազան նւէրներով շահել աստւածների սիրտը։

Ամենից շատ նրանք հոգ էին տանում, որ աստւածները քաղցած չմնային։ Ուստի, ամէն անգամ ճաշելիս՝ մարդիկ աստւածներին բաժին էին հանում։ Աստւածների բաժինը նրանք դնում էին մի յայտնի տեղ և հաւատացած էին, թէ աստւածները գալիս և ուտում են։ Մինչև այսօր էլ կան շատ ցեղեր, որոնք դեռ ևս այդ սովորութիւնն ունեն։

Աստւածներին յատկացրած բաժինը կոչում էր զոն, իսկ աստծուն բաժին հանելը՝ զոհարերութիւն։

31.

Գ Ո Ւ Ր Մ Ե Ր

Շատ անգամ ոչ միայն աղօթքով, այլ և զոհաբերութիւններով էլ անկարելի էր լինում աստւածների բարկութիւնը մեղմացնել ու դժբաղդութեան առաջն առնել։ Այդ հանգամանքը նախամարդիկ բացարում էին նրանով, թէ աստւածներն էլ, մարդկանց նման, զանազան ճաշակ ու բնաւորութիւն ունեն։ Հարկաւոր է ուրեմն զիտանալ, թէ նրանցից իւրաքանչիւրին ի՞նչ ձեռք պիտի աղօթել և ի՞նչ տեսակի զոհ մատուցանել։

Բացի զրանից, նրանք այնպէս էին հաւատում, թէ ամէն մի դժբաղդութիւն մի առանձին աստծու գործն է։ Պէտք էր ուրեմն իմանալ, թէ այս կամ այն դժբաղդութեան զէպքում որ աստծուն դիմել։ Եթէ, օրինակ, չնայած ամէն տեսակ աղօթքների ու զոհաբերութեան, հիւանդը մեռնում էր, այդ ապազունակութեան, անհամար մեռնում էր, աստծու զոհի տէրերը սիալւել են ու չենցոյց էր, որ հիւանդի տէրերը սիալւել են ու չենցոյց էր, որ հիւանդի տէրերը սիալւել են ու չենցոյց էր, թէ որ աստծուն և ի՞նչպէս պէտք էր սիալւել։ Այդ բանը չափազանց դժւար էր հասկարացնել։ Այդ բանը համար անհրաժեշտ էր բոլոր սրովհետեւ զրա համար անհրաժեշտ էր բոլոր աստւածների բնաւորութիւնն ու ճաշակն իմանալ։

Ընդհանուր այդպիսի տգիտութիւնից օգուտ քաղելով, գուրս էին գալիս ճարպիկ ու խորամանկ մարդիկ, որոնք միջնորդի գեր էին կատարում աստւածների ու մարդկանց միջև։ Նրանք գուշակութիւններ ու մարդարէութիւններ էին անում, կախարդութիւններով կամ աղօթքներով հիւանդներ էին բժշկում և ուրիշ այդպիսի զանազան գործերով պարապում։

Այդ կարգի մարդկանց կոչում են կախարդ, վը-
հուկ և այլն անուններով:



Նկ. 31. Քուրմ:

Հնումը մարդիկ կախարդներից սաստիկ վախե-
նում էին, կարծելով թէ նրանք կարող են աստւած-
ների միջոցով ամէն տեսակ չարիքներ հասցնել: Եւ այդ
չարիքներից ու կախարդների բարկութիւնից վախե-

նալով, մարդիկ ամէն կերպ աշխատում էին նրանց
սիրտն էլ շահել զանազան նւէրներով ու ընծաներով:

Այդ զանազան տեսակի կախարդներն ու գուշա-
կողները ժամանակի ընթացքում աւելի ու աւելի մեծ
գիրք ու պատիւ ստացան ազգերի մէջ և կոչւեցին
բուրմեր, այսինքն աստւածների պաշտօնեաներ:

Ինչպէս որ մի ազգի իշխանաւորները հոգ էին
տանում ժողովրդին օտար թշնամիներից պաշտպա-
նելու մասին, այնպէս էլ քուրմերն էին հոգ տանում
ժողովրդին աստւածների բարկութիւնից ու շարիք-
ներից ազատ պահելու մասին:

Քուրմերն իրանց աղօթքների և այլ արարողու-
թիւնների համար, ժողովրդից առատ վարձատրու-
թիւն էին առնում:

Հայ գիւղերում մինչև այսօր էլ գեռ կան կա-
խարդներ, որոնք յայտնի են «գրբաց», «նետ գնող»,
«աղօթող», «թիզ չափող» և այլ անուններով: Նրանք
աղօթքներով ու զանազան միջոցներով հիւանդներ
են բժշկում, գուշակութիւններ անում ու այլ և այլ
կախարդութիւններ անում: Տգէտ ժողովուրդը գեռ
այսօր էլ դրանցից վախենում է և մեծ յարգանքով
ու պատռով է վերաբերուում:

32.

ԿՐԱՊԱԾՏՈՒԹԻՒՆ

Նախամարդիկ կամենալով իրանց պաշտած ան-
տեսանելի աստւածներին մշտապէս տեսնել, սկսել են
փայտից, բարից ու մետաղներից էլ աստւածներ շիներ:
Զեռքով շինւած աստւածները կոչւում են կուրմեր:

Բնութեան ամէն մի երեսյթը պատկերացնելու
համար, մի առանձին կուռք էին շինում: Այսպէս՝



Նկ. 32. Կուռք-հրէշ:

քամին, որոտը, երաշտը և ուրիշ շատ բնական երեսյթները նրանք առանձին-առանձին կուռքերով էին
պատկերացնում:

Կուռքեր պաշտելը կոչւում է կրապաօտքին: Քանի դեռ մարդիկ լաւ գործիքներ չունեին ու վարժ չէին նկարելու և քանդակելու արւեստներին, նրանց շինած կուռքերը չափազանց տձե, կոշտ ու կոպիտ բաներ էին: Բացի դրանից՝ մարդիկ աշխատում էին իրանց շինած կուռքերին այնպիսի մի կենդանի արարածի կերպարանք տալ, որ ոչ մի կենդանու չը նմանւեն: Այսպէս, կուռքի գլուխը մարդու էին նմանում, իսկ մարմինը՝ մի շատ հսկայական թիւաւոր եղի և այլն:

Շատ անգամ այդ հրէշանման կուռքերին այնպիսի զարհուրելի կերպարանքով էին շինում, որ նայողին միմիայն վախ ու սարսափ կարող էին ազդել:



Նկ. 33. Փիւնիկեան կուռք:

Ժամանակի ընթացքում, երբ մարդիկ հետզհետէ վարժւեցին քանդակագործութեան արւեստին, նրանք սկսեցին իրանց կուռքերն աւելի ու աւելի գեղեցիկ կերպարանքով շինել:

Աւելի ուշ ժամանակներում, մարդիկ տեսնելով, որ աշխարհիս բոլոր կենդանի արարածներից ամենագեղեցիկը մարդնէ, սկսեցին իրանց կուռքերը միմիայն մարդու կերպարանքով շինել: Նրանք այդ ժամանակ աշխատում էին իրանց կուռքերն ամենագեղեցիկ տղամարդու կամ կնոջ նմանեցնել: Այդ տեսակի կուռքերը շինուում էին գլխաւորաբար մարմար քարից և

բրոնզից, երբեմն նոյնիսկ ոսկուց ու արծաթից:
Այդպիսի կուռքերն արձան են կոչւում:
Արձանները շինելու արևեստը սաստիկ զարգացած
էր Յունաստանում: Հազարաւոր տարիներ առաջ
այնտեղ շինւած մարմարէ արձանները մինչեւ այսօր



Նկ. 34. Ապոլլոնի արձանը

Էլ պահւում են մուղէյներում և նայողին հիացմունք
պատճառում:

Հայերն էլ շատ հնումը իրանց կուռքերը կամ
արձաններն ունեին: Դրանցից իրանց գեղեցկութեամբ

յայտնի էին Անահիտն ու Սատիրի:

Կուռքերին սկզբում մարդիկ զնում էին բացօ-
դեայ մի որեէ բլրի զագաթին, կամ գետի եզերքին և
կամ անտառի մէջ: Այդ աեղերումն էլ մարդիկ հա-
ւաքում էին, որոշ ժամանակներում, իրանց պաշ-
տամունքը կատարելու և քուրմերի միջոցով աստ-
ւածների պատճառութեամբ լսելու:

Ժամանակի ընթացքում, մարդիկ կուռքերին յա-
տուկ բնակարաններ շինեցին, որ մենաներ կոչւե-
ցին: Մեհեաններում էին պահւում կուռքերը, այն-
տեղ էին քուրմերը կատարում իրանց կրօնական ա-
րարողութիւններն ու ժողովրդի բերած զոհաբերու-
թիւնները:

43.

ՄԱՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Նախամարդիկ երբեմն կենդանի մարդկանց Էլ
էին աստւածացնում: Դրանք լինում էին մեծ մասամբ
ցեղի կամ ազգի այն իշխաններն ու թագաւորները,
որ ամենից աւելի դաժան և ահոելի բնաւորութիւն
էին ունենում:

Այդպիսիներից մարդիկ սաստիկ վախենում ու
սարսափում էին: Իսկ ինչոր նախամարդուն վախ էր
ազդում, նա էլ պաշտամունքի առարկայ էր գառնում:

Այդ կարգի մարդկանց այնպիսի գերբնական յատ-
կութիւններ էին վերագրում, որպիսին մարդկանց
կարծիքով, միմիայն աստւածները կարող են ունենալ:

Մարդիկ չէին կարողանում հաւատալ, օրինակ,
թէ ամբողջ կեանքում ժողովրդին տանջող դաժան
իշխանն ու թագաւորը կարող են, ուրիշ մարդկանց
նման, մեսնել և այլիս վաս չհասցնել: Նրանք չէին

հաւատում նոյնպէս, թէ այդ բանակալները սովորական մարդկանց նման են ծնւեր

Եւ այդպիսի աստւածացրած իշխանների կամ թագաւորների մասին, մանաւանդ զրանց մահից յետոյ, մարդիկ հազար ու մի առասպելներ էին յօրինում իրանց վառ երեակայութեամբ և պատմում սերընդից սերունդ:

ՎԱՀԱԳՆ

Հայ ժողովուրդն էլ շատ հին ժամանակներում իր թագաւորներից մի քանիսին աստւածացրել ու պաշտել է:

Այդպիսիներից մէկն է եղել Վահագն թագաւորը: Վահագնը Տիգրան երւանդեանի մեծ որդին ու յաջորդն էր: Դեռ հօր կենդանութեան ժամանակ, նա զանազան պատերազմների մէջ ցոյց տւած քաջագործութիւններով մեծ անուն էր հանել և ժողովրդի սիրելին դառեր:

Վահագնի մասին, հնումը, հայ երգիչները շատ շատ բաներ են պատմել ու երգել: Պատմում էին, օրինակ, որ նա կատաղի կոփւ է մզել վիշապների (թերևս Մարտաստանից դադիմակ Աժդահակի ցեղի) դէմ ու յաղթելով նրանց, Վիշապամալ անունն է ստացել:

Վահագնի օրերում, հայերը հեթանոս էին. Ալրանք պաշտում էին բնուրիւնը՝ երկինքն ու երկիրը, ինչպէս նաև վեղիցիլ ու բաջ մարդկանց:

Հեթանոս հայն ամէն առաւօտ ծագող արեին էր երկրպագում ու աղօթում և նրան էր ընդունում բո-

լոր բարիքների պատճառը, նա ամենից աւելի սիրում էր արեաստւածը:

Հէնց այդ էր պատճառը, որ նրանք իրանց չափից գուրս սիրած մարդուն համեմատում էին արեաստւածու հետ: Այսպէս Վահագնի ծնունդը նրանք մարդկային չէին համարում, այլ աստւածային:

Ահա թէ ինչպէս Գողթան գաւառի երգիչները հնումը երգել են Վահագնի ծնունդը*):

Երկնեց երկին և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,
Եւ եղեգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի:

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից
Բոց է դուրս գալիս եղեգան փողից.

Բոց է պատել կարմիր եղեգնիկ,
Բոց է գարձել և ծով ծիրանի,
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ.
Վահագն ահա մանուկ գեղանի:

Բոց մօրուքով,
Հուր ըրթունքով.

*) Մենք փոխանակ այստեղ գնելու Գողթան երգիչների երգած «երկնէր երկին և երկիր» գրաբար բանաստեղծութիւնը, որ անմատչելի է աշակերտներին, «Գեղարւեստ» հանդէսից արտասպելով՝ տեղ ենք տալիս մեր յայտնի բանաստեղծ Յովի: Յովիաննիսեանի նոյնանուն բանաստեղծութիւնը, որը շատ հարազատ և միենոյն ժամանակ շատ գեղեցիկ կերպով պատկերացնում է գիւցաղն Վահագնի առասպելական ծնունդը:

Հուրհեր զլսին հրեղէն պսակ
եւ աչերն են զոյգ արեգակ:

Ալեծուփ ծովի ծիրանի ալիք
Գնում են գալիս, ծեծում են ափունք,
Ահեղամոռնչ զոռում է մանկիկ,
Սաստում են ալեացն հրավառ շրթունք:

Վահագն ծնաւ, լոեցէք ալիք,
Դու ծովահալած, դադար տո, մըրիկ:
Թեկերն ոսկեհուռ, հրահեր բաշով,
Նժոյգը տակին՝ սլացաւ վերե, —
Երեսդ ծածկիը համեստ շղարշով
Տես՝ ով է գալիս, և դու, հուր արե:
Գլուխդ ալենոր, քաջածին Մասիս,
Դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս:
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Աւետում են քեզ ցաւերի դու ծով:
Ցնծա, բիւր վիշապ Հայաստան աշխարհ,
Փրկութեան արե — Վահագնիդ տեսար:

Վահագն աստծու մասին պատմում էին նաև որ նա
մի օր գնացել է Ասորեստանի Բարշամ աստծուց յարդ
է գողացել, երկնքի երեսով փախչելիս յարդը թափ-
թքում է, որից մի մեծ սպիտակ հետք է գոյանում և
որը, իբր թէ, մինչեւ այսօր էլ երեսում է երկնքի երեսին
ու կոչւում է դարմանսգոյի կամ յարզողի ճանա-
պարհ:

Վահագն թագաւորին աստւածացնելով, հայերը
նրա անունով Աշտիշատում մի տաճար էին շինել և այն-
տեղ գրել նրա պղնձէ արձանը: Այդ տաճարը կոչւում
էր Վահագին սենեալ կամ Վանեվահեան մենեան:
Տարւայ որոշ օրերում, Հայաստանի ամէն կող-

մերից այդտեղ հաղարաւոր մարդիկ ուխտի էին գը-
նում և խնդրում նրանից առողջութիւն, քաջութիւն,
անուշ ձայն և ամէն տեսակ բարիք:

Վահագնի ժառանգներն այդ տաճարի քրմա-
պետներն ու քրմերն էին, որի եկամուտով էր, այ-
սինքն նւէրներով, նրանք ապրում էին:

35.

ԼԵԶՈՒ

Նախապատմական մարդիկ սկզբում իրանց խօ-
սելու եղանակով բոլորովին չէին տարբերում փոքր
երեխաններից: Նրանք էլ իրանց միտքը հասկացնում
էին միմիայն ձայներ ու բացականչութիւններ ար-
ձակելով և դէմքի ու ձեռքերի շարժումներով:

Եթէ, օրինակ մէկն ուզում էր իր ընկերներին
զգուշացնել, թէ այսինչ տեղում արջ, գալ կամ մի
ուրիշ գազան կայ, նա այդ գազանի նման մոնչում
էր ու գէմքը ծոմում ճիշտ այնպէս, ինչպէս որ
մարդիկ, այդ գազաններին պատահելիս, սարսափից
կարող են անել:

Այդ եղանակով միմեանց հետ խօսելով, նախա-
մարդիկ էլ փոքր երեխանների նման, շանը ասում
էին «հաւ-հաւ», կատուին՝ «միառ», թոշունին «ճիւ-
ճիւ», նրա ձագուկին՝ «Ճիւ-Ճիւ» և այլն:

Նոյն ձեռվ նրանք խօսքեր էին ննարում նաև
ընութեան զանազան երկայթների և այլ առարկա-
ների համար:

Հէնց այդ ձայներից ու զանազան բացականչու-

թիւններից է, որ հետզհետէ, երկար դարերի ընթացքում, կազմւել ու զարգացել է մարդկային լեզուն Եւ քանի մարդկանց կեանքը բարդացել, այնքան էլ նրանց լեզուն և ոճը հարստացել են:

Շատ անդամ մարդիկ միենոյն բառը տարբեր շեշտով և եղանակով արտասանելով, տարբեր էլ միտք էին յայտնում: Այսպէս՝ երբ կամենում էին ասել, որ այսինչ բանը շատ հեռու է գտնւում, ասում էին՝ նեռուու, իսկ շատ մեծ ասելու տեղ, ասում էին մեեծ, և այն:

Ամէն մի ցեղ իր ապրած երկրի կլիմայի ու վարած կեանքի համաձայն, իր յատուկ լեզուն էր հնարում: Իսկ լեզուների կազմակերպւելու հետ միասին կազմակերպւում էին բազմաթիւ և զանազան ազգերը:

36.

Գ Ի Բ

Մարդիկ գրել սովորել են շատ աւելի ուշ ժամանակներում: Եւ սկզբում գիրը բոլորովին այն չէր, ինչոր այսօրւան մեր գործածածն է:

Առաջ մարդիկ կամենալով նշանների միջոցով այս կամ այն առարկայի մասին մի որ և է միտք



Նկ. 35. Հերօգլիֆներ (պատկերագրեր):

արտայայտել, նկարում էին այդ առարկան: Եթէ օրինակ, ուզում էին ասել, թէ կովերը, ձիերը, կամ մարդիկ գնացել են, նրանք գնացող կով, ձի և մարդ էին նկարում: Իսկ եթէ ուզում էին ասել, թէ մարդիկ միմեանց հանդիպեցին, կամ թէ միմեանցից բաժանւեցին, նկարում էին դէմ առ դէմ եկող, կամ միմեանցից հեռացող մարդկանց պատկերներ:

Որովհետեւ այն ժամանակ մարդիկ գեռ ոչ թուղթ ոչ մատիտ և ոչ էլ ուրիշ նկարելու որևէ բան ունէին, ուստի նրանք նկարում էին փորագրելով: Փորագրում էին փայտի, կաւի և քարի վրայ:

Փորագրւած նշաններով գրւած գիրը կոչւում է ներօղիք:

Հերօգլիֆով գրելը շատ հեշտ բան չէր և ահագին ժամանակ էր խլում: Մարդիկ, կամենալով աւելի արագ գրել, սկսում են հետզհետէ կրնաւած նըկարներով գրել, այսինքն՝ ամբողջ առարկայի փոխարէն, նրա մի մասն էին միայն նկարում: Այսպէս՝ մի ամբողջ թռչունի կամ անասունի տեղ՝ նկարում էին նրա գլուխը, մի ոտը, կտուցը կամ աչքը:

Այդպիսի բազմաթիւ կրծատումների հետևանքն այն է եղել որ ժամանակի ընթացքում մի բոլորովին ուրիշ տեսակի գիր է ստացւել, այնպիսի գիր, որը հերօգլիֆին չէր նմանում:

Այդ նոր տեսակի գրերը կամ տառերը շատ նըման են մեխերի կամ սեպերի, և այդ պատճառով էլ կոչւել են սեպանեւ տանեւ կամ սեպագրեր:

Հայաստանումն էլ շատ հին ժամանակներում սեպանեւ տառերով էին գրում:

Աւելի ուշ, մարդիկ քարի, փայտի ու կաւի փո-

խարէն, գրելու համար գործ էին ածում կաշի. կաշ-
ի խիստ բարակացրած ու նուրբ տեսակը կոչում է
մազաղաթ:

37.

Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ն Ե Ր

Հազարաւոր տարիներ անցնելուց յետոյ, երբ
ցեղերն ու ազգերը կազմակերպւել էին ու իրանց
համար ապահով վիճակ ստեղծել, մարդիկ սկսում
են իրանց հեռաւոր անցեալով հետաքրքրւել: Ամենքն
էլ փափագում են իմանալու թէ երբ և որտեղից է
առաջ եկել իր ազգը, ովքեր են եղել իր նախահայ-
րերը և այլն:

Այդ ժամանակ ահա, ամէն մի ժողովուրդ աշ-
խատել է երեւակայութեամբ զանազան պատմու-
թիւններ հսարել իր նախնիքների մասին և աւանդել
սերնդից սերունդ:

Շատ դէպքերում այդ պատմութիւնները միանդա-
մայն զուրկ էին որևէ ճշտութիւնից: Նրանք պարզա-
պէս վառ երեսակայութեամբ յօրինւած բաներ էին:

Իսկ շատ անգամ էլ մի որ և է խսկական դէպք
այն աստիճան ծաղկեցնում էին, որ նոյնպէս խիստ
հեռանում էր ձշմարիտ պատմութիւնից:

Այն պատմութիւնները, որոնք զուտ երեսակա-
յութեան արդիւնք են, կոչում են առասպելներ: Իսկ
նրանք, որոնք մի որոշ չափով խառն են խսկական ե-
ղելութիւններով՝ կոչում են աւանդութիւններ:

Ամէն մի ժողովուրդ իր ազգի ծագումի ու ան-

յիշելի անցեալի մասին շատ ու շատ այդ կարգի պատ-
մութիւններ է յօրինել:

Այդ կարգի պատմութիւններից են Հայկի, Ա-
րամի, Արա գեղեցիկի, Տիգրանի և Վահագնի մասին
պատմւածները: Կան և շատ ուրիշները, որ համեմա-
տաբար աւելի նոր ծագումն ունեն:

38.

Վ Ա Ղ Ա Ր Ծ Ա Կ

I

Արշակունիների տիրապետութիւնը

Հայկազնց Վահագն թագաւորի մեռնելուց բա-
ւական ժամանակ յետոյ, Հայաստանին ու նրա դրա-
ցի բոլոր երկրներին տէր է դառնում մակեդոնացի-
ների Ալեքսանդր-Մեծ հոչակաւոր թագաւորը:

Սակայն, երբ Մեծն Ալեքսանդրը մեռնում է,
հպատակ ազգերը միմեանց յետեկից գլուխ են բարձ-
րացնում և մի-մի առանձին թագաւորութիւն հաս-
տառում:

Այդ նորակազմ թագաւորութիւններից ամենից
նշանաւորն ու զօրաւորը պարթեների երկում կազմ-
ւածն էր, որը գտնուում էր Կասպից ծովի հարաւ-
արեկեան կողմում: Պարթեական բոլոր թագաւորնե-
րը կոչում էին Արշակ, որ նշանակում է թագաւոր.
Իսկ թագաւորական ամբողջ ցեղը կոչում էր Արշա-
կունեաց ցեղ կամ Արշակունիք:

Արշակունիներից շատ մեծ անուն ստացաւ մա-

Նաւանդ մէկը, որին ժողովուրդը, իր կատարած քաշագործութիւնների և քաղցր վարմունքի համար՝ Մեծն Արքակ էր անւանում:

Նա Միջագետքից դուրս էր քշել մակեդոնացիներին ու տէր գառել Մարաստանին և Ասորեստանին:

Որքան մակեդոնացիները իրանց հպատակներին նեղում էին, այնքան Մեծն Արշակը աւելի քաղցր էր վարում իր հպատակների հետ, որով գրաւում էր թէ իր և թէ հարեան ժողովրդների սիրտը:

Հայերը, որ շատ նեղւած էին մակեդոնացիների գրած ծանր հարկերից ու բռնութիւններից, իմանալով Մեծն Արշակի այդ քաղցր վերաբերմունքը, դիմում են նրան ու խնդրում, որ նա զայ ու իրանց երկրին էլ տիրապետի:

Մեծն Արշակն օգտւելով հայերի հրաւերից, առանց ուշանալու, իր Վալարքակ եղբօրը մի գունդ զօրք է տալիս և ուղարկում է Հայաստան թագաւորելու:

Վաղարշակին դիմաւորում է Բագրատ իշխանն իր զօրքերով, հետք տանելով նրա համար թանկագին ընծաներ: Բացի այդ՝ Բագրատը Վաղարշակի գլխին է դնում Հայկազնց թագը և պսակում նրան Հայաստանի թագաւոր:

Այսպէս է պատմում մեզ ժողովրդական աւանդութիւնը՝ Արքակունիների թագաւորութեան սկզբնաւորութեան մասին Հայաստանում:

Վաղարշակը Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, մի շարք պատերազմներ է մղում հարեան ազգերի դէմ, որոնք չուղենալով Վաղարշակին թագաւոր ճանաչել, շարունակ յարձակում էին Հայաստանաչել, շարունակ յարձակում էին Հայաստանի հին

տանի վրայ ու անհանգիստ անում:

Այսպէս օրինակ՝ Կապադովկիայի Մորփիւլիկէս իշխանը, անցնելով այլ և այլ մանր ազգերի գլուխը՝ զէնք էր բարձրացրել հայոց նոր թագաւորի դէմ և ուզում էր սպանել նրան:

Վաղարշակը Երասխ գետի ափին, Արմաւիրի մօտ, եր զօրքը վարժեցնելուց ու կարգի դնելուց յետոյ, գնում է Մորփիւղիկէսի դէմ: Եփրատ գետի արևմտեան կողմում թշնամիները հանդիպում են իրար և սկսում է կատաղի պատերազմ: Մորփիւղիկէսը պաշարելով Վաղարշակին՝ մահ էր սպանում, բայց հայ իշխանները տեսնելով վտանգը, ընկնում են թշնամու վրայ, սպանում Մորփիւղիկէսին և ազատում իրանց նոր թագաւորին:

Այս առաջին յաջողութիւնից խրախուսւած՝ Վաղարշակն իր զօրքերով արշաւում է Հայաստանի հիւսիսային կողմերն ասպատակող ցեղերի վրայ և դուրս քշում նրանց Հայաստանի սահմաններից և այսպէս խաղաղացնում իր երկիրը:

II

ՀԱՅՈՅ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԸ

(Մ. Խորենացու պատմածի համաձայն)

Մովսէս Խորենացի պատմիչը, որ ազգային աւանդութիւններն է զրի առել, պատմում է, որ երբ Վաղարշակն իր թագաւորական աթոռը հաստատում է Միջագետքի Մծբին քաղաքում, հետամուտ է լինում իմանալու, թէ ովքեր են եղել Հայաստանի հին

բնակիչները, ի՞նչ կարգեր, ի՞նչ սովորութիւններ են
ունեցել նրանք:

Ոչ մի գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն չը-
գտնելով, Վաղարշակը՝ Մար-Արաս Կատինա անունով
ասորի գիտնականին, որը ծանօթ է եղել բարելական
ու յունական լեզուներին, ուղարկում է Նինոէ, Մեծն
Արշակի մօտ և խնդրում է՝ թոյլ տալ նրան արքունի
գիւանատանը փնտրելու իր ուզածը:

Գրած նամակում Վաղարշակը յայտնում է հե-
տեւալը. «Եղբայր, չի երեսում, որ այստեղ (Հայաս-
տանում) սրանից առաջ որևէ կարգ եղած լինի և ոչ
էլ մեհեանների պաշտամունք, յայտնի չէ, թէ ով է
եղել այս աշխարհի գլխաւորներից առաջինն ու վեր-
ջինը, ոչ մի օրինաւոր բան չկայ, այլ ամեն ինչ
տակն ու վրայ է ել վայրենի»:

Մար-Արասը, Մեծն Արշակի թոյլտուութեամբ փըն-
տրում է Նինոէի արքունի գիւանատանը և վերջի վեր-
ջոյ մի հին գրւածք է գտնում: Այդ գրւածքը վերա-
բերում է Հայկի և նրա ցեղի բոլոր նահապետների,
իշխանների և թագաւորների կատարած գործերին:

Մար-Արասն իր այդ գիւտը բերում, յանձնում
է Վաղարշակին, որը դրա մի քանի մասերը քարերի
վրայ փորագրել տալով՝ հրամայում է նրանց կանդ-
նեցնել քաղաքների փողոցներում, որպէսզի մարդիկ
ծանօթանան իրանց նախապատերի գործերի հետ, իսկ
մի մասն էլ մեծ խնամքով պահ է տալիս իր ար-
քունական գիւանատան մէջ:



III

ՎԱՂԱՐՇԱԿԸ ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐ Է ԴՆՈՒՄ

Այժմ երբ արդէն Վաղարշակը ծանօթանում է
Հայաստանի անցեալի հետ, նա մտածում է և ներ-
կայի ու ապագայի մասին: Նա գիտէր, որ առանց օ-
րէնքների, կարգերի ու կանոնների ոչ մի երկիր չէր
կարող հարստանալ, զարգանալ, ուստի վճռում է այդ
պակասները լրացնել:

Նա ամենից առաջ սահմանում է այլ և այլ պաշ-
տօններ, ինչպէս թագաւորական պալատի մէջ, այն-
պէս էլ ուրիշ գործերի համար: Այդ պաշտօնները նա
տալիս է ցեղապետներին ու իշխաններին:

Պաշտօնների այս կերպ բաժանումից, առաջւայ-
րուր ցեղապետ իշխանները այլևս կոչում են նա-
խարաբեներ:

Նախարարները բաժանուում եին երկու կարգի՝
մեծ եւ փոքր:

Վաղարշակն իրաւունք է տալիս Բագրատ իշ-
խանին մարգարիտներով ու թանկագին քարերով
զարգարւած՝ վարսակալ կըեւ նրա ցեղին է վերա-
պահում հայոց թագաւորների գլխին թագ դնելու ա-
մենամեծ պատիւը:

Այս Բագրատից էր առաջացել Բագրատունիների
յայտնի և հարուստ նախարարութիւնը:

Բագրատ իշխանից յետոյ, Վաղարշակը մեծ պա-
տիւներ է տալիս Աժդահակի ցեղից՝ Մուրացան նա-
խարարին ու նրան իր երկրորդն է նշանակում, այ-
սինքն՝ երբ նախարարները թագաւորի մօտ ժողովի կամ

ինչուքի հաւաքւէին, Մուրացանը անմիջապէս նրա կողքին պիտի նստէր, յետոյ միայն միւս նախարարները՝ իրանց կարգով:

Արծունիներին նա պաշտօն է տալիս՝ թագաւորի առջեց արծւէնշան դրօշակը տանել, իսկ Վարաժնունիներին՝ որսի վերակացու է կարգում:

Բացի դրանցից, Վաղարշակն առանձին-առանձին պաշտօնեաներ է նշանակում զօրանոցների, հաւանոցների, ամառանոցների և ուրիշ բազմաթիւ կարեւոր գործերի վրայ:

Այսպէս բոլոր աչքի ընկնող պաշտօնները եկուոր նախարարներին տալուց ու նրանց սիրտը գրաւելուց յետոյ, Վաղարշակը չէ մոռանում նաև Հայկի ցեղին: Նա դրանց քաջերից ու հաւատարիմներից ընտրում ու կազմում է իր պալատի պահապան զօրքը, որ կոչում է Ուսան գունդ:

Ամենապատւաւոր պաշտօններից մէկն էլ քրինին էր, որը Վաղարշակը յանձնում է Վահենունեաց ցեղին. յետոյ Հայաստանի ամենահին քաղաքում՝ Արմաւիրում Ահենաններ է շինել տալիս և նրան Մրազան քաղաք յայտարարում:

Այդտեղ էր, որ նա արեի և լուսնի պատւին արձաններ է կանգնեցնել տալիս:

IV

Վաղարշակն ի՞նչպէս է կառավարում Հայաստանը

Այս բոլոր գործերի հետ, Վաղարշակը չէ մոռանում հետզհետէ կարգի բերել նաև իր զօրաբանակը:

Նա իր զօրքի ընդհանուր հրամանատար, ինչպէս և բոլոր հեծելազօրքի պես է նշանակում Բագրատ նախարարին, իսկ Մուրացան նախարարին է յանձնում հետեակ զօրքերի կառավարութիւնը: Դրանք էլ իրանց օգնականներն ունեին:

Նա Հայաստանը բաժանում է նահանգների եւ գաւառների և դրանց կառավարութիւնը յանձնում զանազան նախարարների:

Այս նախարարները, որ ապրում էին սահմանների վրայ, պարտաւոր էին իրանց բանակը միշտ կազմ ու պատրաստ պահել, որպէսզի թշնամինների յարձակման գէպքում՝ կարող լինէին հայրենիքը պաշտպաններ:

Սահմանապահ նախարարներից գլխաւորներն էին հետեալները — հիւսիսում՝ Գուգարաց բղեշիր, հիւսիսարկելքում՝ Սիսակեանները, հարաւ-արկելքում՝ Կագմեանները, հարաւում՝ Աղձնեաց բղեշիր, իսկ արեմուտքում՝ Անգեղ տոհմը, որի համբաւաւոր ներկայացուցիչը Տորբ իշխանն էր:

Վաղարշակն իր գրած օրէնքների գործադրութեան վրայ հսկելու համար, թէ գիւղերում և թէ քաղաքներում, առանձին-առանձին դատաւորներ է նշանակում:

Նա մինչև անգամ իր պալատում երկու մարդու պաշտօն է տալիս, որոնցից մէկը պարտաւոր էր յիշեցնել թագաւորին իր գործած անիրաւութիւնները, իսկ միւսը՝ յանցաւորներին պատժելը:

Այս բոլոր գործերը կարգ ու կանոնի տակ դնեւոց յետոյ, Վաղարշակը չէ մոռանում և մի շատ կարեւոր բան, այսինքն գահածառանգութեան ինդիրը,

որը կարող էր, իր մահից յետոյ, պատճառ դառնալ արիւնահեղութիւնների:

Նա կարգադրում է, որ թագաւորի մօտ մնայ միայն անդրանիկի որդին, իսկ միւս որդիներն ու ազգականները՝ ուրիշ աւելի հեռու նահանգներում ապրեն:

Այսպիսով Վաղարշակն իր թագաւորութեան աւելի քան 20 տարւայ ընթացքում այնպիսի կարգեր և օրէնքներ է սահմանում հայոց աշխարհի համար, որոնք մինչև այդ ժամանակ միանգամայն անծանօթ էին հայ ժողովրդին:

44.

ԱՐՏԱՇԵՍ ԱՅԽԱՐՃԱԿԱԼ

Արշակունիները թէկ հետդիետէ բազմաթիւ երկրների տէր են դառնում, բայց գրանցից իւրաքանչիւրն ունէր իր առանձին թագաւորը:

Այդ թագաւորների մէջ առաջին տեղն էր բըռնում պարթևականինը, իսկ երկրորդ տեղը՝ Հայաստանինը:

Վաղարշակի թոռը, Արտաշէսը, որ Հայաստանում էր թագաւորում, մի հպարտ ու պատերազմասէր մարդ էր: Նա իր հօր, Արշակի գահը նստելուն պէս, ցանկանում է թագաւորների թագաւոր դառնար ուրիշ խօսքով՝ խլել պարթևաց թագաւորից առաջնութեան պատիւր:

Հէնց այդ պատճառով էլ, նա յարձակուում է իր ազգակից Արշական թագաւորի վրայ և խլում նրանից ինչպէս առաջնութեան, նոյնպէս էլ փող կտրելու

իրաւունքը: Պարթևաց երկրում նա իր համար մինչև անգամ պալատ է շինել տալիս ու իր պատկերով է փող կտրում:

Արտաշէսն այս յաջողութիւնից խրախուսւած, վճռում է արշաւել գէպի արևմուտք՝ նւաճելու համար Փոքր Ծախայի մանր-մունը ազգերը և յետոյ, Մեծ ծովի (Միջերկրական) վրայ նաւարկելով՝ գնալ հասնել հեռաւոր Յունաստան, և տիրել այդ գեղեցիկ երկրին:

Նա իր այս միտքն իրագործելու համար, նախ Տիգրան որդուն Արարատեան երկրի վրայ թագաւոր է կարգում, յետոյ Հայաստանի հիւսիսային երկիրները՝ Պոնտոսն ու Կովկասը յանձնում է իր դաշնակակից Պոնտացի Միհրդատ իշխանին և նրան կնութեան է տալիս իր Արտաշամայ աղջիկը:

Այդ բոլորը կարգադրելուց յետոյ, իր հպատակ ազգերից նա անթիւ, անհամար զօրք է հաւաքում և արշաւում է գէպի արևմուտք:

Արտաշէսի զօրքի թւի մասին պատմում են, որ եթէ իւրաքանչիւր զինուոր միենոյն տեղը մի քար զցէր՝ այդ տեղում ահազին ըլուր կը ձեանար, որ երբ զետից ջուր խմէին՝ գետը ցամաքելու աստիճան կը պակասէր: Պատմում էին նաև, որ երբ այդ զօրքերը պակասէր: Պատմում էին նաև, որ երբ այդ զօրքերը մի-մի նետ էին արձակում, արել խաւար, և լոյս-ցեմի-մի նետ էին արձակում, արել խաւար, և լոյս-ցեմի-մութ էր դառնում: Նրա զօրքերը այնքան բազը երկը մութ էր դառնում: Նրա զօրքերը այնքան բազը մաթիւ էին, որ անկարելի էր համարել, ուստի չափելով էին միայն կարողանում որոշել քանակը:

Այս ոյժերով Արտաշէսը որտեղից որ անցել է, բոլոր թագաւորներն ան ու սարսափի մէջ են ընկել և շատեր երկիւղից ընդ առաջ գալով՝ թանկազին ընծաներ են մատուցել և իրանց հպատակութիւնը յայտնել:

Արտաշէսը տիրելով Փռքը Ասիայի շատ երկրներին, այդ տեղերից պղնձից ձուլւած ու ոսկեզօծ շատ կուռքից է ուղարկել Արմաւիր և հրամայել է, նրանց կանգնեցնեն այլ և այլ մեհեանների մէջ:

Այս Արշակունի աշխարհակալը վերջապէս հասնում է Մեծ ծովի եզերքը և իր նաւերով անցնում ծովի արևմտեան ափը—Յունաստան: Նա այնտեղ, շատ հարուստ քաղաքներ, մեծ ու փոքր գիւղեր աւերելուց, քանդելուց յետոյ, բազմաթիւ յունական կուռքեր է Հայաստան ուղարկում, որոնք նոյնպէս գետեղում են հայոց աստեածների կողքին:

Այս ան ու սարսափ ազդող Արտաշէսը, երբ պատրաստում էր աւելի ու աւելի հեռու՝ մինչև Հըռոմ գնալ, խորամանկ հռոմայեցիք, փոխանակ պատերազմելու, առատ ու փայլուն ոսկիներով կաշուում են նրա զինուրականներին ու նրանց ձեռքով սպանել տալիս այդ յանդուգն մարդուն:

Հպարտ ու փառասէր թագաւորը մեռնելիս՝ հետեւալ բացականչութիւնն է անում. «Աւաղ փառացս անցաւորի»:

45.

ԵՐԻԱՆԴ ԱՐԾԱԿՈՒՆԻ

1

ԱՐՏԱՇԵՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Արտաշէս Լի մահից յետոյ, Արշակունեաց գահի վրայ մի շարք թագաւորներ են նստում: Այդ թագա-

ւորներից Սանատրուկը որսի ժամանակ պատահմամբ սպանվում է:

Երւանդ Արշակունի նախարարը, որ Սանատրուկի հեռաւոր ազգականն էր, նայ նախարարների մեծ մասի սիրալ գրաւելով՝ թագաւորական գահի վրայ է բարձրանում:

Սակայն Բագրատունի նախարարներից ոչ մէկը յանձն չէ առնում նրա գլխին թագ գնել. որովհետեւ Վաղարշակի դրած օրէնքի համաձայն, թագաւորելու իրաւունքը պատկանում էր միմիայն Սանատրուկի ժառանգներին:

Այդպիսով Երւանդի ու Բագրատունի նախարարների յարաբերութիւնները հետզհետէ լարւում էին:

Երւանդը կասկածելով, որ մի գուցէ Սանատրուկի ժառանգները նախարարների օգնութեամբ փորձեն իրանց հօր գահին տէր գառնալ, հրամայում է բոլորին կոտորել:

Այդ կոտորածից ազատում է միայն մի մանուկ՝ Արտաշէս անունով, որի ծծմայրը գաղտագողի փախցնում է նրան ու թագնում Կապուտան ծովի (Ուրմիոյ լիճ) մօտերը՝ Ներ գաւառում:

Բագրատունեաց ցեղից Սմբատ Բիւրատեանը, որ մի շատ յանդուզն ու քաջ նախարար էր, կոտորածի և Արտաշէսի փախուստի լուրն ստանալով, վճռում է մանուկ Արտաշէսին պաշտպան հանդիսանալ:

Նա իր երկու աղջիկներին՝ Սմբատանոյշին ու Սմբատունուն Սպեր գաւառի իր հայրական կալւածից իսկոյն տեղափոխում է Բայբերդ ամրոցը և ինքն շտապում է որբացած թագաժառանդի օգնութեան:

Երբ Երւանդն իմանում է Արտաշէսի փախուստը,

սաստիկ վրդովում է և ամէն կողմ մարդիկ է ուղարկում, որպէսզի գտնեն նրան և տեղն ու տեղը նրա կեանքին վերջ տան:

Սմբատն Արտաշէսի հետ երկար ժամանակ ձորերի մէջ է թափառում ու պահում: Քանի-քանի անգամներ նրանք իջևանում են Մարատանի բարձր սարերի վրայ ու մար հովիւների վրանների տակ գիշերում, մինչեւ որ յարմար ժամանակ գտնելսվ՝ անցնում են պարթեաց սահմանն ու ապաւինում Դարեի Արշակունի թագաւորին:

Դարենը շատ սիրով է ընդունում թափազուրկ արքայորդուն և Սմբատին: Նա Արտաշէսին պահում է իր պալատում և կրթում իր զաւակների հետ, իսկ Սմբատին նւիրում է ընդարձակ կալւածներ՝ Մարատանի շրջանում:

Երւանդը շատ փորձեր է անում Արտաշէսին ձեռք ձգելու համար: Նա Դարենին դեսպաններ ուղարկելով, աշխատում է համոզել, թէ նա Սանատրուկի որդին չէ, այլ մար հովեր որդի և Սմբատը խարել է նրան: Նա Սմբատին էլ է մարդիկ ուղարկում և զանազան խոստումներ անելով, խնդրում է, որ Արտաշէսին իրան յանձնի:

Դարեն թագաւորը հաւատ ընծայելով Երւանդի և ոչ մէկ ասածին, ընդհակառակը, հետզհետէ աւելի ու աւելի է սիրում իր խնամքին յանձնւած որբուկին ու նրա դաստիարակ Սմբատին: Սմբատը Երւանդի մարդկանց խայտառակարար յետ գարձնելով յայտարարում է, որ Երւանդը մի գող է, մի յափշտակիչ, իսկ Արտաշէսը՝ միակ օրինաւոր ժառանդը հայոց դահին:

Երբ Երւանդի բոլոր փորձերը, Արտաշէսին ձեռք ձգելու համար, անյաջող են անցնում, նա դիմում է վրիժառութեան: Նա յարձակւում է Բայրերդ ամրոցի վրայ, տիրում է նրան և Սմբատանոյշին ու Սմբատունուն գերի բռնելով՝ տանում, փակում է Եփրատ գետի վրայ գտնուող՝ Անի ամրոցում:

II

Երւանդը պատերազմի և պատրաստում

Տարիների ընթացքում Երւանդն անկարող է լինում որևէ կերպով Արտաշէսին ձեռք ձգել, ուստի գալիք վտանգից պատերազմ համար, դիմում է այլ և միջոցների:

Ամենից առաջ Միջագետքը նա տալիս է հռոմայեցիներին, որի փոխարէն նրանք պարտաւորուում են օգնել Երւանդին, երբ նա պատերազմ ունենայ պարթեների հետ: Բացի այդ, նա խոստանում է տարէց-տարի որոշ հարկ տալ նրանց:

Ապա Երւանդն իր գահը Մծրինից փոխադրում է հայոց հին մայրաքաղաքը — Արմաւիր: Սակայն այդտեղ էլ նա երկար չէ մնում: Արամաւիրի արկմտեան կողմում, Երասխ գետի ափին մի բարձւողիր վայր է նա ընտրում և այնտեղ շինել է տալիս մի նոր պարսպապատ քաղաք՝ Երւանդաւատ անունով:

Երւանդը շարունակ մտածելով իր թշնամիների մասին, դարձել էր վերին աստիճանի կասկածոտ: Վրա համար էլ ինքնապաշտպանութեան մի շարք միջոցների է դիմում:

Նա Երւանդաշատ քաղաքը դրսից ամուր ու բարձր պարիսպով պատելուց յետոյ, քաղաքի մէջաեղումն էլ մի միջնաբերդ է շինել տալիս երկաթէ գոներով։ Այդ գոները ցերեկները բացւում, իսկ զիշերները փակւում էին։ Միջնաբերդը քաղաքի հետ միացւած էր երկաթէ կամուրջներով։

Երւանդն ինքն ապրում էր հէնց այդ միջնաբերդում, ուր տեղափոխել էր նաև արքունական բոլոր գանձերն ու հարստութիւնները։ Նա Արմաւիրից չէր տեղափոխել միայն կուռքերը, վախենալով, որ չինի թէ տօների պատճառով հաւաքւած ամբոխը մի դաւդրութիւն սարքէ իր դէմ։

Բացի Երւանդաշատից, Ախուրեան գետի վրայ Երւանդը մի ուրիշ քաղաք էլ է շինել տալիս և հրամայում է այստեղ փոխադրել բոլոր կուռքերի բագինները (արձանները), որի պատճառով էլ այստեղը կոչում է Բագարան։

Երւանդն է շինել տւել նաև Արաքսի հարաւային կողմում Երւանդակերտ ամուր բերդաքաղաքը։

Քուրմերին (հոգևորականներին), որոնք Հայաստանում բաւական մեծ թիւ էին կազմում և շատ ազդեցիկ գեր խաղում, իր կողմը զրաւելու և խիստ մօտկից հսկելու համար, Երւանդն իր Երւազ եղորը նրանց վրայ երմապես է կարգում։

III

Երւանդն սպանում, իսկ Արտաշելը թափաւորում է։

Չնայելով Երւանդի գործ դրած այնքան բազմա-

տեսակ միջոցներին, որպէս զի վտանգից ազատւի, այսուամենայնիւ նա շատ տխուր վերջ է ունենում։

Մինչդեռ Արտաշէս արքայորդին մեծանում էր Դարեհ թագաւորի պալատում, Սմբատ Բիւրատեանը զանազան արշաւանքներում ցոյց տւած իր քաջագործութիւններով ու հաւատարմութեամբը, թէ բուլոր պարթէ նախարարների և թէ մանաւանդ Դարեհ թագաւորի առանձին սէրն էր վայելում։

Սմբատի ինդիրքով պարթէ մեծամեծները դիմում են Դարեհ թագաւորին և միջնորդում, որ նա Արտաշէսին օգնէ՝ իր հօր գահին տիրանալու։

Դարեհը սիրով ընդունում է այդ միջնորդութիւնը և Սմբատին զօրք է տալիս այդ նպատակով։

Սմբատն Արտաշէսի հետ պարթեական բանակի գլուխն անցած, շտապում է դէպի հայոց աշխարհը։

Երւանդն այդ ժամանակ Ուտիացոց աշխարհումն էր, Երբ իմանում է Սմբատի ճանապարհ ընկնելը, իսկոյն շտապում է վերադառնալ Երւանդաշատ։ Նա հայերից, վրացիներից բաւական զօրք է հաւաքում, ինչպէս և Կապագովկիայից։ Միջագետքից էլ հրաւիրում է շատ լարձիսն զինւորներ և պատրաստում է պատերազմի։

Երւանդը նախարարներին իր կողմը գրաւելու համար, հարուստ ընծաներ ու առատ ոլորզմներ է նւիրում։

Նա առանձին ուշադրութիւն է դարձնում Արքայի Սուրացան նախարարի վրայ և նրան է վերագարձնում երկրորդական գահը, որ իր նախորդները խլել էին նրանից։

Երւանդի բոլոր այս նախազգուշութիւնները սա-



կայն զուր են անցնում: Հէնց որ Սմբատն ու Արտաշէսը երևում են Ռւտիացոց սահմանի վրայ, սահմանապահ նախարարներն իրանց զօրքով անցնում են օրինաւոր թագաժառանդի կողմը: Երւանդի միակ ու մեծ յոյսը— հոռմայեցիներն էլ ուշանում էին:

Այս հանգամանքները շատ վատ էին ազդում երւանդի մօտ մնացող միւս նախարարների վրայ և վըհատութիւն առաջ բերում նրանց շարքերում:

Սմբատի բանակը, Գեղարքունեաց սարերից անցնելով, գալիս համում է Երւանդաշատից դէպի հիւսիս և Ախուրեան գետի ափին, Երւանդի դէմ բանակ զնում:

Պատերազմն սկսելուց առաջ, Արտաշէսը դադանի բանակցում է Արգամ նախարարի հետ ու խոստանում նրան աւելի մեծ պատիւներ, եթէ նա խօսք տար պատերազմի հէնց սկզբում թողնել Երւանդին և անցնել իր կողմը:

Հնչում են փողերը, սկսւում է պատերազմը:

Արտաշէսի հայ և պարսիկ կարիճները, հետիւտն թէ ձիաւոր, կատաղի արշաւանք են սկսում:

Արտաշէսի զրօշակների ծածանման հետ Արգամը թօղնում է Երւանդի բանակն ու իր զօրքով պատերազմի դաշտից յետ քաշւում:

Երւանդի բանակի աջ ու ձախ թեերի վրայ կրուղ նախարարները տեսնելով այդ, նոյնպէս խառնում են Արտաշէսի բանակին և կաւում իրանց նախկին տիրոջ դէմ:

Պատերազմը սակայն շարունակւում է:

Երւանդը թէն մնում է միայն վրացի ու վարձկան զինուրներով, բայց նա կատաղի կերպով դիմա-

զրում է և ամէն հսարք գործ դնում մանաւանդ Արտաշէսին սպանելու:

Հասել էին վճռական րոպէները: Վրացի ու վարձկան զինուրները սոսկալի կերպով ջարդւում ու փախուստ են տալիս: Միայն Տաւրոսցի քաջերն էին, որ յանդգնութիւն ունեցան առաջ մզւելու, պաշարելու Արտաշէսին վտանգաւոր կերպով և աշխատելու, իրանց Երւանդին տւած խոստման համաձայն, սպանել Արտաշէսին:

Այդ վտանգաւոր րոպէին, Արտաշէսի ծծմօր որդին՝ Գիւակը յանկարծ վրայ է պրծնում ու իր կեանքի զնով ազատում Արտաշէսին:

Երբ Երւանդի այս վերջին յօյս էլ է ջախջախւում և երբ նա տեսնում է իր զօրքի այդպէս չարաշար յաղթելը, նստում է ձի ու սրբնթաց փախչում դէպի Երւանդաշատ:

Ճանապարհին նա մի քանի տեղերում ձի է փոխում, որպէսզի արագ զնայ ու թշնամու ձեռքը չը ընկնի, բայց քաջակորով Սմբատը մի գումարտակ զօրքով հալածում է նրան մինչև Երւանդաշատի դոները:

Արտաշէսն այդ գիշեր մնում է պատերազմի դաշտում և գրաւում բոլոր այն աւարը, որ Երւանդը թողել էր այնտեղ: Նա երկու կողմից ընկած բոլոր զինուրների զիակները թագել է տալիս ու այդ օրւան յիշատակի համար այդ տեղն Երւանդավան, այսինքն Երւանդին վանած, փախցրած տեղ է կոչւում:

Հետեւեալ առաւօտ, լուսադէմին՝ Արտաշէսն իր բանակով զնում է Երւանդաշատի վրայ: Նա կէսօրից առաջ համում է այնտեղ և հրամայում է իր զօրք-

քերին կանչել «Մարտամատ», այսինքն Մարտ եկաւ: Դրանով Արտաշէսն յիշեցնում էր այն նախատինքը, որ երւանդը հասցը էր իրան:

Առաջին ուժեղ յարձակումից յետոյ, նախ պահապանները և ապա բերդի զօրքերն են անձնատուր լինում և պղնձէ դռները բաց անում: Արտաշէսի զինուորները ներս են խուժում, ուր նրանցից մէկը պատահամբ, թրով երւանդին սպանում է:

Արտաշէսը շատ վեհանձնութեամբ է վարւում նրա դիակի հետ Նա հրամայում է, իբրև մօր կողմից Արշակունի, թաղել նրան յարգանքով ու վրան մահարձան կանգնեցնել:

Արտաշէսը երւանդի յիշատակը բոլորովին ջնջելու համար, երւանդաշատի անունը փոխում է և Մարմէս է անւանում:

Այսուհետեւ Սմբատ Բիւրատեանը մտնելով արքունական գանձարանը, այնտեղից վերցնում է Արտաշէսի հօր՝ Սանատրուկի թագը և բերում, դնում է իր սիրելի Արտաշէսի զլսին ու նրան թագաւոր պսակում հայոց աշխարհի վրայ:

46.

Ա Ր Տ Ա Շ Ե Ս Ի I I

I

ԱՐՏԱՇԵՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Նոր թագաւորը գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ, իր առաջին պարտքն է համարում, իրան օգ-

նող պարթեաց զօրքին մհծամեծ ու տռատ նւէրներ տալ և ճանապարհել Պարսկաստան:

Իր խոստմունքի համաձայն, նա Արգամին երկրորդական գահի հետ ջնորհում է նաև յակնբակապ պասկ, երկու ականջներին օդեր և մի ոտին էլ կարմիր կօշիկ: Բացի այդ, նա իրաւունք է տալիս նրան՝ թագաւորի հետ սեղան նստելիս՝ գործածել ոսկի զըդալ, պատառախաղ ու բաժակ:

Երիտասարդ թագակիրը չի մոռանում իր բարերար Սմբատին: Արտաշէսը նրան է յանձնում բոլոր հայ զօրաց սպարապետութիւնը, ինչպէս նաև արքունի պալատի վերակացութիւնը:

Իր ազատարար Գիսակի որդուն՝ Ներսէսին էլ հողեր է տալիս և նախարարների կարգն է դասում ու նրա ցեղն անւանում է Դիմակսեան, այսինքն՝ գէմքից կտրւած:

Մինչև այդ ժամանակ երւանդաշատից ոչ շատ հեռու, Բագարանում քրմապետութեան պաշտօն էր վարում երւանդի եղբայր երւազը, որ իր եղբօր թիու թիկունքը, ուստի և Արտաշէսի էլ կատաղի հակառակորդն էր եղել:

Թագաւորի կարգադրութեամբ Սմբատը գնում է Բագարան, բոնում է երւազին ու խիստ կերպով պատժում նրան: Նրա տեղ նա քրմապետ է նշանակում Մոգպաւսէ (մոգ պաշտող) անունով մի անձն, որ Արտաշէսի շատ մօտիկ բարեկամն էր: Յետոյ նա գրաւում է երւազի բոլոր հարստութիւնը, նրա 500-ի չափ ծառաները, մեհենական թանկագին իրերն ու զարգերը և բերում, յանձնում է թագաւորին:

Թագաւորը երւազի 500 ծառաները Սմբատին է

պարզեռմ, իսկ գանձերի վրայ աւելացնելով ուրիշ շատ արժէքաւոր ընծաներ, Ամբատի հետ ուղարկում է իր բարերար Դարեհ թագաւորին և յայտնում իր սրտագին շնորհակալութիւնները:

Դրանից յետոյ Արտաշէսը երասխ գետի ափին շինել է տալիս մի նոր քաղաք, զարդարում է նրան հոյակապ ու գեղեցիկ շէնքերով և իր անունով կոչում է Արտաւածաւած: Նա երւանդաշատից այդտեղ է փոխադրում իր թագաւորական գահը, նրան դարձնում է իր մայրաքաղաքը, և այնտեղ է տեղափռում թագարանում եղած բոլոր աստւածների արձանները:

Այդ քաղաքի առևտրի և արհեստների զարգացման նպաստելու համար, Արտաշէսն երւանդաշատում բնակող շատ հրէաններին էլ բերում, բնակեցնում է Արտաշատում:

Արտաշէսի այդ զբաղւած ժամանակը, Հայաստանի սահմանների վրայ երևում են հռոմայեցի հարկանիանները բազմաթիւ զօրքերով և պահանջում են իրանց հասանելիք հարկերը, սպառնալով, որ հակառակ դէպքում կը խուժեն Հայաստան և ամէն ինչ տակն ու վրայ կանեն:

Արտաշէսը հռոմէական ահագին լիզեններին դիմագրելու պատրաստութիւն չունենալու պատճառով, կատարում է նրանց պահանջը և հաշտում հռոմայեցոց հետ:

II

ԱՐՏԱՇԵՍՆ ՈՒ ՍԱԹԵՆԻԿԸ

Հազիւ էր պրծել Արտաշէսը հռոմայեցիներից, ահա կովկասեան լեռնականները, միացած վրացոց մի մասի հետ, արշաւում են Հայաստան և սկսում ասպատակել հայոց երկրները:

Արտաշէսն այս անգամ հաւաքում է իր զօրքերն ու հասնում կուր գետի ափը, ուր առաջին ձականամարտին յետ է մղում թշնամիններին, որոնք գնում, բանակ են զնում գետի ձախ ափին: Արտաշէսը կանգ է առնում նոյն գետի աջ կողմին: Այդ պատերազմում Արտաշէսը գերի է վերցնում Ալանաց թագաւորի որդուն:

Ծերունի թագաւորը գեսպանների վիջոցով ազաշում պաղատում է, որ Արտաշէսը բարեկամանայ իր հետ, վերադարձնի գերի ընկած որդուն, բայց Արտաշէսը մերժում է:

Արտաշէսի միտքը սակայն փոխւում է, երբ կուր գետի ափին երևում է Սաթենիկը՝ ծերունի և վրշտահար թագաւորի գեղեցիկ ու աննման աղջիկը: Արքայադուսալը ձայն է տալիս Արտաշէսին և ասում:

— Ո՞վ մեծ և ազնիւ թագաւոր, ազատիր իմ սիրելի եղբօրը, միթէ հաճելի են քեզ իմ թշւառ հօրօն ի բուն թափած արցունքները: Վայել է, որ երկու դրացի ազգերն այդ կերպ միմեանցից վրէժ լուծեն: Ազաշում եմ, գթա, ողորմիր իմ ալեզարդ հայրիկին ու նւիրէր ինձ իմ սիրելի եղբօրը:

Սաթենիկի խելօք և անուշիկ խօսքերը, մանա-

ւանդ նրա աննման գեղեցկութիւնը հայոց երիտասարդ թագաւորի սիրտը շարժում են և նա անմիջապէս ազատ է արձակում Ստթենիկի եղբօրը։ Ալանսերի վրաններում տիրում է չափից դուրս ուրախութիւն։

Հայոց թագաւորը հէնց այդ ըոպէին հաւանելով աննման Սաթենիկին, Սմբատի խորհրդով դեսպաններ է ուղարկում Ալանաց թագաւորի մօտ և արքայադուրին իրան կնութեան է ուղում։

Համաձայնութիւնն առնելուց յետոյ, Արտաշէսն Ալանաց թագաւորին ընծայ է ուղարկում շատ ոսկի և կարմիր մորթ, որ լեռնականների մէջ խիստ յարգի էր։ Ապա Սմբատն և ուրիշ շատ նախարարներ, արքայազուն իշխանների ու իշխանուհիների հետ, անցնում են գետը և գնում են մեծ փառքով ու պատւով Սաթենիկին—հայոց թագուհուն՝ բերում Արտաշէսի վրանը։

Արտաշէսն Ալանաց թագաւորի հետ դաշն կապելուց յետոյ, վերադառնում է Արտաշատ, ուր սարսում են ճոխ հարսանեկան հանդէսներ, որոնց մասին քողթան երգիչները շատ գեղեցիկ երգեր են երգել։

III

ԱՐՏԱՇԷՍԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արտաշէսի աշքի ընկնող և փայլուն գործն եղել է այն, որ նա ամէն միջոց գործ է զրել և նպաստել հայ ժողովրդի յառաջադիրութեանը։

Արտաշէսն օտար երկներից բազմաթիւ գաղ-

թականներ է բերել տալիս ու բնակեցնում Հայաստանի անմարդաբնակ վայրերում։

Տարիների ընթացքում այդ տեղերում, գիւղեր ու ազարակներ են շինուում, և որպէսզի մէկի հողը միւսի հողերի հետ չխառնուի, Արտաշէսը հրամայում է որոշ սահմաններ գծել և սահմանագլուխների վրայ քառակուսի քարեր տնկել

Արտաշէսն որոշ կարգ-կանոն մտցնելով հողերի բաժանման մէջ, մեծ զարկ է տալիս երկրի մշակութեան գործին—երկրագործութեան։

Նա, բացի այդ, մեծ ուշագրութիւն է դարձնում արևեստների ու գիտութեան վրայ։

Հաղորդակցութեան միջոցները նրա օրով աւելի ևս կանոնաւորւում են. նա բազմաթիւ կամուրջներ է շինել տալիս, հրամայում է ծովակների ու գետերի վրայ նաւակներ քաննեցնել և վերջապէս ցամաքի վըրայ երթեկնեկութեան համար ուղիղ և հարթ ճանապարհներ է կառուցել տալիս։

Ժողովրդական երգիչների երգածի համաձայն, Արտաշէսի օրով երկիր չէր մնացել որ անշակ լինէր, մարդ չէր մնացել որ պարապ ու անգործ ըշջէր։

Մինչկ Արտաշէսի օրերը հայերը գրերի գործածութեան հետ ծանօթ չէին, ինչպէս նաև տարիների, ամիսների, շաբաթների, հաշիւը պահելու սովորութիւնը չունէին, նա առաջինն է եղել, որ մտցրել է այդ բոլորը հայոց մէջ և այդպիսով նպաստել հայ ժողովրդի մատոր յառաջադիմութեանը։



IV

ԱՐՏԱՇԵՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ԱՐՏԱՀԱԶԴԻՆ

Մինչև այժմ, ինչպէս տեսանք, Արտաշէսը զրեթէ իր բոլոր գործերում յաջողութիւն է գտել բայց այդ այնքան սիրւած, յարգւած մարդն էր, ծերութեան հասակում ունեցել է իր ընտանեկան շատ ցաւերն ու հոգսերը:

Նրան մեծ վիշտ են պատճառել իր որդիները: Սրանցից Արտաւազը բնաւորութեամբ մի չար ու նախանձոտ մարդ է եղել, և դրա համար էլ իր ամբողջ կեանքն եղել է չարութիւնների մի օղակ:

Նախանձելով Արդամի երկրորդական գահի և բարձր պատւի վրայ, նա գրգռում է հօրն Արդամի դէմ, տաելով, որ իբր Արդամն աչք է ունեցել թագաւորական իշխանութեան վրայ:

Բանն այնտեղ է հասցնում, որ թագաւորը վերջապէս խլում է Մուրացան ցեղից երկրորդութիւնը և տալիս Արտաւազին: Նրանով սակայն չի գոհանում նա:

Մի անգամ Արտաշէսն ու իր որդիները երբ Արդամի մօտ ճաշի էին, արքայորդիներն աղմուկ են բարձրացնում, թէ Արդամը թագաւորի դէմ դաւագրութիւն է սարքել և ուզում է թագաւորին սպանել: Այդ պատրւակով նրանք թափւում են ծերունի նախարարի վրայ, ծեծում են ու մազերից քաշկոտում:

Արտաշէսը, սաստիկ վրգովւած, դառնում է Արտաշատ և իր Մաժան որդուն յանձնում է մի գունդ, որ գնայ և Արդամին պատժէ: Նա գնում է և Արդամի ցեղը կոտորում, պալատն այրում ու ստաց-

ւածքն էլ արքունիք է գրաւում:

Իրանից յետոյ, հազիւ թէ թագաւորի ու Արդամի միջն հաշտութիւն էր կայացել ու վերջինն իր կալւածները յետ ստացել, երբ Արտաւազը վճռում է գրաւել Արդամի Նախիջնան քաղաքը և Երասխ գետի հիւսային կողմն ունեցած կալւածները: Արդամի որդին չի կարողանում տանել այս բոլոր անարդանքներն ու զրկանքները և ապստամբում է: Արտաւազը յարձակւում է նրա վրայ և յաղթելով Մուրացաններին, կոտորում է այդ ամբողջ ցեղը: Նա չի խնայում նոյնիսկ ալեգարդ ծերուկին— Արդամ նախարարին:

Արտաւազը Մուրացանների հետ իր գործն այսպէս վերջացնելուց յետոյ, աչք է գնում Սմբատ Բիւրատեանի պաշտօնների ու հարստութեան վրայ և ուզում է սպանել այն մարդուն, որ իր հօր խնամակալը, ազատարան ու թագաւորեցնողն է եղել:

Թագաւորն իմանալով Արտաւազի այդ չար միտքը, սաստիկ յուկում վրդովւում է, բայց խոհեմ ու վեհանձն Սմբատը, իր յօժար կամքով թողնում է իր բոլոր պաշտօններն ու հեռանում դէպի Կորդւաց աշխարհը: Այդպիսով Արտաւազը դառնում է նայոց զօրքերի սպարապետ:

Նա արդէն հասել էր փառքի գագաթնակէտին, մնում էր միայն որ թագաւոր դառնար:

Արտաւազը միւս եղբայրները, սակայն, անգործ չեն մնում: Նրանք էլ իրանց կանանց թելագրութեամբ, սկսում են խիստ կերպով բողոքել իրանց եղբօր դէմ, որ պետական բոլոր բարձր պաշտօններն իրան էր սեփականեցրել:

Արտաշէսն իր որդիներին խաղաղացնելու համար,



իւրաքանչիւրին մի-մի պաշտօն է տալիս: Վրոյրին՝
արքունի պալատի հազարապետ, իսկ Մաժանին՝ քըր-
մապետ է նշանակում: Յետոյ իր ամբողջ զօրքը չորս
մասի է բաժանում, որի արևելեան մասը յանձնում
է Արտաւագդին, արևմտեանը՝ Տիրանին, հիւսիսա-
յինը՝ Զարեհին, իսկ հարաւայինը՝ Սմբատ Բագրա-
տունուն:

Այսուհետեւ Արտաշէսը լսելով, որ հռոմայեցոց
պետութեան մէջ խռովութիւններ են ծագել, ապըս-
տամբւելու յարմար առիթ է համարում և դադարեց-
նում է հարկ տալ:

Հռոմայեցիք սրանեղած, բազմաթիւ զօրքով,
Հայաստանի արևմտեան կողմից վրայ են տալիս ու
Տիրանի հետ կուփ բռնւելով, հալածում են նրան
մինչև Բասենի հովիտը: Այստեղ են հասնում Արտա-
ւագդն ու Զարեհն իրանց բանակներով և պատերազ-
մը նորոգում: Հռոմայեցիք սրանց էլ են խիստ նեղը
գցում: Վերջին րոպէին պատերազմի դաշտն է գալիս
ծերունի և փորձւած Սմբատն ու իր թարմ ոյժերով
թշնամիներին ջարդում է և մինչև Կապագովկիայի
սահմանները փախցնում:

Այս յաղթութիւնից ոգեորւած, հռոմայեցոց հպա-
տակ ուրիշ ազգերն էլ են ապստամբութեան դրօշ
բարձրացնում և մերժում հարկ տար: Այդ ժամանակ
հռոմայեցոց գահի վրայ բարձրանում է մի նոր կայսր:
որն անցնելով հռոմէական բազմաթիւ լեզէօնների
վլումը, յարձակում է ապստամբների վրայ ու առան-
ձինառանձին նորից հպատակեցնում նրանց:

Արտաշէսը վտանգի առաջն առնելու համար,
շտապում է թանկագին ընծաններով գնալ կայսեր

մօտ և ներողութիւն խնդրելով, խոստանում է ոչ
միայն ապագայ, այլև չվճարւած տարիների հարկերն
էլ վճարել:

Եւ այսուհետեւ նա մինչև իր մահը, հաւատարիմ
է մնում հռոմայեցիներին:

V

ԱՐՏԱՇԷՍԻ ԵՒ ԱՐՏԱԿՈՋԻ ՄԱՀԸ

Վերոյիշեալ պատերազմից յետոյ, Արտաշէսը
հռոմայեցոց կայսեր առաջարկով, մեկնում է պար-
թեաց երկիրը, որպէսզի գաղարեցնէ պատերազմը և
հաշտեցնէ կուռղ կողմերին, բայց ճանապարհին Մա-
րանի գաւառի Բակուրակերտ աւանում սաստիկ հի-
ւանդանում է:

Այդտեղ էր գտնուում Աքենիան տոհմի Աքաղոյ
անունով նախարարը, որ մի շատ կեղծաւոր ու շողո-
քորթ մարդ էր: Նա շատ է խնդրում, աղաչում Ար-
տաշէսին, որ հրաման տայ իրան՝ գնալ Երիզա ա-
ւանը և նրա առողջութեան համար աղօթել Անահիտ
աստածունուն:

Արտաշէսը թոյլ է տալիս Աքաղոյին գնալ երիզա,
բայց նա ուեռ չվերագարձած, ծերունի թագաւորը
մեռնում է:

Դառը կակիծով է լսում հայ ժողովուրդն իր թա-
գաւորի մահը. լսում են նաև արքայորդիներն ու
նախարարները: Ամէն կողմ սուզ է տիրում: Ամէն
մարդ լաց է լինում: Արտաշէսին մինչև այդ չտես-

նւած կերպով են թաղում։ Անթիւ, անհամար ժողովուրդ էր գնում նրա դագաղի առջեց ու յետևից։

Որդիներն ու ազգականները, նախարարներն ու զինւորականները նոյնպէս շարան-շարան հետեւում էին դագաղին։

Առջեց գնում էին փողահարսերը, ետեից լալկան կանայք, որոնք տիսուր ու քաղցրաձայն երգում ու փառաբանում էին Արտաշէսի կատարած գործերն ու քաջութիւնները։ Դրանց հետեւում էին զօրքերն ու ամբոխը։

Հօր դագաղի վրայ էլ Արտաւազդը ցոյց է տալիս իր նախանձու ու չար ողին։ Նա տեսնելով ժողովրդի կողմից իր հօրը ցոյց տւած այս աննկարագրելի սէրը, ասում է. «Հայր, դու որ գնացիր և քեզ հետ տարար աւճողջ աշխարհը, ես էլ ում, աւերակների վրայ թագաւորեմ»։

Արտաշէսի մեռնելուց յետոյ, իր ժառանգը՝ Արտաւազդը դաւնում է Հայաստանի թագաւոր։ Պատմում են, որ մի օր Արտաւազդը որսի գնալիս, երբ Արտաշատի կամրջովն էր անցում, խելացնորւում է և գլուրւում մի խոր անգունդի մէջ և անյայտ կորչում։



Ակ. 36. Յանկարծ Արտաւազդը անդրոնին է դորւում։





ՀՀ Ազգային գրադարան



NL0041364

